

ՀՈՒԼԻՈՍ ԱՖՐԻԿԱՆՈՍԻ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»
ԵՎ ՄՈՎՍԵԱ ԽՈՐԵՆԱՑԻՆ

ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆ

Սեքստոս Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրությունը» Մովսես Խորենացու հիշատակած այն աղբյուրներից է, որոնց առիթով նա առավել շատ է քննադատվել: Խնդրո առարկա հատվածը նրա «Պատմության» II գրքի 10-րդ գլխում է, որից առաջ, 9-րդ գլխի վերջում, նշելով, որ սպառել է Մար Արաս Կատինայի մատյանի նյութը, պատմիչն այնուհետև գրում է. «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ դրոցն Աֆրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսեպոս և Հիւպոդիտայ և այլք բազումք ի Յունաց»¹:

Այս հազորդումը և նշված աղբյուրի օգտագործումը որոշակի չեն. իր «Պատմության» կոնկրետ ո՞ր գլխում է Խորենացին սկսում օգտվել մ. թ. II-III դարերի հայտնի ժամանակագրի երկից, որի հունարեն բնագիրը, ցավոք, պահպանվել է միայն հետագա հեղինակների գրվածքներում սփռված հատվածների, ուղղակի ու անուղղակի մեջբերումների տեսքով², այնուհետև մինչև որտե՞ղ է շարունակում օգտագործել այդ աղբյուրը, կա՞ն «Պատմության» մեջ տեղեկություններ, որոնք նա իրոք կարող է քաղած լինել Աֆրիկանոսի գրքից. եթե այո, ապա որո՞նք են այդ տեղեկությունները, և վերջապես՝ ճի՞շտ է առհասարակ Խորենացին պնդում, թե այդ «Ժամանակագրությունն» իրեն ծառայել է որպես աղբյուր: Հաշվի առնելով խնդրի վերաբերյալ արտահայտված կարծիքները՝ այս հարցերին վերստին անդրադառնալը և անկանխակալ, տրամաբանական ու հնարավորություն սահմաններում փաստարկներով հիմնավորված պատասխան գտնելը կարևոր է թե՛ աղբյուրագիտական, թե՛ պատմագրի որոշ տեղեկությունների հավաստիությունը պարզելու ե թե՛ աղբյուրներից օգտվելու նրա մեթոդների ուսումնասիրության տեսանկյուններից:

Նույնպիսի հարցականների առիթ է տալիս այդ գլխի շարունակությունը: Խորենացին Աֆրիկանոսի մասին ասում է. «Նա բովանդակ փոխադրեաց որ ինչ ի քարտէսս դիւանին Եդեսիայ, որ է Ուռհայ, որ յաղազս թագաւորացն մերոց պատմէր. որ մատենանքն ի Մծբնայ էին փոխեալ անդր և ի Աինոպայ Պոնտոսէ ի մեհենական պատմութեանցն»: Ապա փորձում է իր տեղեկությունն ավելի ստույգ ու համոզիչ դարձնել. «Մի ոք

1 Խորենացու «Պատմությունից» մեջբերումներն անում ենք ըստ հետևյալ հրատարակության. Մ ո վ ս է ս Խ օ Ր Ե Ն Ա Յ Ի . Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն), լրացումները Ա. Բ. Սարգսեանի. Երևան, 1991:

2 Պահպանված հատվածներն ամփոփված են J. - P. M i g n e. Patrologiae Cursus Completus շարքում. տե՛ս Patrologia Graeca (այսուհետև՝ PG), t. 10, Turnholti (Belgium), 1857, col. 63-93:

անհաւատասցի, քանզի և մեզէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի: Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկլէսիաստէ գիրք Եւսեբի Կեսարաց-
ւոյ, զոր ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու: Խնդիր արասցես ի Գեղարքունի, ի գաւառին Աիւնեաց, և գտցես յառաջին հագներգութեանն յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յԵղեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱրգար, և զկնի Արգարու մինչև ցԵրուանդ: Որ և այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի»:

Եթե «Հայոց պատմութեան» նշված գլուխը ճիշտ չհասկացվի կամ դիտարկվի քննադատական խստութեամբ, հետևող եզրակացությունները կլինեն ի վնաս պատմագրի: Խորենացու անձի ու գրքի հանդեպ թերահավատ գիտնականների տեսակետները հենց այդպիսին են, իսկ նրանք, ովքեր այլ առիթներով հանդես են եկել ի պաշտպանություն Խորենացու, Աֆրիկանոսին առնչվող խնդրին կամ առհասարակ չեն անդրադարձել, կամ անդրադարձել են հարևանցիորեն, խուսափողաբար քննադատությամբ չհակադրելով որևէ էական կովան: Այդպիսի կովաններ, իհարկե, այսօր էլ դժվար է գտնել: Առաջադրված հարցերին հնարավոր կլինի ստույգ պատասխանել միայն դրա համար անհրաժեշտ նյութ բովանդակող նոր աղբյուր կամ աղբյուրներ գտնելու դեպքում: Աս քիչ հավանական է, հետևաբար Խորենացու պատմության այս և հաջորդ գլուխներին անդրադառնալ ցանկացող ամեն ոք ստիպված պիտի լինի սահմանափակվել եղած նյութով: Իսկ այդ դեպքում միակ բանը, որ հնարավոր է անել, արդեն Հայտնի օժանդակ աղբյուրները վերստին վերանայելն է և, միաժամանակ, Խորենացու շարադրանքին ուշադիր հետևելը. նախ՝ ճիշտ հասկանալու համար, թե նա ինչ է ասում, և ապա՝ առանձնացնելու համար «Հայոց պատմության» մեջ այն տեղեկությունները, որոնք Խորենացին իրոք կարող է քաղած լինել Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից»:

Ամենևին չհավանելով վերջնական եզրահանգումների մենք, այնուամենայնիվ, ուզում ենք այդպիսի մի փորձ անել: Քանի որ, ըստ Խորենացու տեղեկության, խնդրո առարկա աղբյուրի հետ կարող է առնչվել մի մեծ ժամանակահատված («մինչև ցԵրուանդ»), համապատասխան բոլոր գլուխների քննությունը կպահանջի ծավալուն ուսումնասիրություն: Այդ համարելով ապագայի գործ՝ այժմ կանգ կառնենք միայն վերոհիշյալ II գրքի 10-րդ գլխի և Արտաշես I-ի, Տիգրան II-ի (ըստ Խորենացու՝ Միջինի) ու Արտավազդ II-ի (ըստ Խորենացու՝ I-ի) պատմության վրա: Առանձնապես հետաքրքիր են վերջին երկուսին վերաբերող գլուխները, քանի որ, ընդունված կարծիքի համաձայն, պատմագիրը նրանց մասին պատմելիս օգտվել է հունալեզու միայն մեկ աղբյուրից՝ հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսի (մ. թ. I-II դդ.) «Հրեական պատերազմի մասին»-ից (հավանաբար՝ այդ երկի մի հայերեն թարգմանությունից)³, և ոչինչ չի վերցրել Աֆրիկանոսից:

3 Հակառակ Գուտշմիդի, ապա նաև Խալաթյանցի կարծիքին, թե Խորենացին օգտվել է Հովսեպոսի և՛ «Հրեական պատերազմի մասին» (այսուհետե՝ B. J.), և՛ «Հրեական հնախոսություն» (այսուհետե՝ A. J.) երկերից, Կարրիերը նշել է (տե՛ս A. C a r r i e r e. La legende d'Abgar dans l'Histoire d'Arménie de Moïse de Khoren. Paris, 1895, p. 374-375), որ

Դեռևս Վ. Լանգլուան գրել է, թե Խորենացին Աֆրիկանոսի գրվածքներին ծանոթ էր Եվսեբիոս Կեսարացու միջոցով և, ըստ երևույթի, գրանցից քիչ օգուտ է քաղել, որովհետև ոչ մի հատված չի մեջբերում⁴:

Հարցի վերաբերյալ առավել կտրուկ առաջին անգամ արտահայտվել է Ա. Ֆոն Գուտշմիդը՝ գրելով, թե «Մովսեսի խաբելու հանգանակությունն» ուրիշ տեղ այնպես ակներև չէ, ինչպես Աֆրիկանոսին վկայակոչելիս ու հաջորգող գլուխներում: Եվ, այդուհանդերձ, նա չէր բացառում, որ Մովսեսն առանձին ղեպքերում (հատկապես Օսրոյենեի թագավոր Արզարի մասին գրելիս) կարող էր օգտված լինել Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից», քանզի այդ աղբյուրը Խորենացու ժամանակ էլ «ի նպաստ քրիստոնեությունից» գործածվող գիրք էր: Սակայն սա չի վերաբերում Տիգրան II-ի և նրա որդի Արտավազդի պատմությունը, որի համար Խորենացու միակ աղբյուրներ Գուտշմիդը համարում էր Հովսեպոսի երկու երկերը⁵:

Հ. Գելցերն Աֆրիկանոսի «Ժամանակագրությունը» նվիրված իր հայտնի ուսումնասիրությունից մեջ անդրադարձել է նաև Խորենացուն՝ նշելով, որ նա հավանաբար այդ աղբյուրին ուղղակիորեն ծանոթ չէր, այլ՝ Եվսեբիոսի «Ժամանակագրություն» ու «Եկեղեցու պատմություն» միջոցով, և եթե նույնիսկ երբեմն օգտվել է նրանից, ապա միայն ուրիշ հեղինակների կատարած մեջբերումների օգնությամբ⁶:

Նման կարծիք է հայտնել Ա. Գարադաշյանը⁷ բացառելով, սակայն, հայ պատմագրի կողմից խնդրո առարկա աղբյուրի տվյալների՝ որևէ ձևով (ուղղակիորեն կամ ուրիշ հեղինակի միջոցով) օգտագործում և հանգելով այն եզրակացություն, թե Խորենացին Աֆրիկանոսի անունը «յԵւսեբեայ միայն գիտէր»: Նա գտնում էր, որ Աֆրիկանոսի «Ժամանակագրությունը» կորած էր V դարից առաջ, քանզի այդ աղբյուրն օգտագործած վերջին հեղինակը Եվսեբիոսն էր, իսկ հետագա պատմագիրներն այն վկայակոչել են՝ «յԵւսեբեայ առնելով»: Այս պնդումը ճիշտ չէ. հետագա մի շարք հեղինակներ (Սոկրատես Աքուլաստիկոսը (մոտ 380-440), Հովհաննես Անտիոքցին (VI-VII դդ.), «Ձատկական ժամանակագրություն» անանուն հեղինակը (VII դ.)⁸ և ուրիշներ) Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից» օգտվել են ոչ Եվսեբիոսի միջոցով: Իսկ VIII-IX դդ. բյուզանդացի ժամանակագիր

«Հրեական հնախոսությունը» Խորենացուն ուղղակիորեն ծանոթ չէր, և նա որպես աղբյուր ձեռքի տակ ունեցել է միայն «Հրեական պատերազմի մասին» գրվածքը: Այդ փաստը մանրամասն ապացուցված է մի հոդվածում (տե՛ս ժ. Գ. էլ չի բեկյան. Հովսեպոս Փլավիոսը Մովսես Խորենացու աղբյուր. — «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, N 5, էջ 71-82):

4 V. Langlois. Etude sur les sources de l'Histoire d'Armenie de Moïse de Khoren. Paris, 1861, p. 329.

5 S. v. A. v. Gutschmid. Über die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren. — Berichte über die Verhandlungen der königlichen sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig, Phil.-Hist. Classe, 1876, N 28, S. 22-26.

6 H. Gelzer. Sextus Julius Africanus und die byzantinische Chronographie. I, Leipzig, 1880, S. 281.

7 Ա. Գարադաշյան. Քննական պատմություն հայոց. Մասն Ա, Թիֆլիս, 1895, էջ 264-265:

8 S. v. Куптура Византии (IV— первая половина VII в.). М., 1984, с. 194, 261, 267.

Գեորգիոս Արնկելլոսը, որի «Ժամանակագրություն» անդրագառնալու առիթներ կունենանք, Աֆրիկանոսի տվյալներն օգտագործել է լայնորեն:

Գարագաշյանից անկախ և նրա հետ գրեթե միաժամանակ Օ. Կարրիերը նույնպես նշեց, որ Խորենացուն երբեք իբրև աղբյուր չի ծառայել Աֆրիկանոսի գրվածքը, և որ նա այդ ժամանակագրի անվանը ծանոթ էր եվսեբիոսի երկերից⁹:

Ի հակադրություն այս գիտնականների, Ա. Բաումգարտները փորձեց ապացուցել, թե Խորենացին ուղղակիորեն ծանոթ է եղել Աֆրիկանոսի «Ժամանակագրությանը»: Նա ներկայացրեց «Հայոց պատմություն» տարբեր հատվածներում (նաև՝ Աֆրիկանոսի վկայակոչումից առաջ) առկա առանձին արտահայտություններ, որոնք, իր կարծիքով, պատմագիրը կարող էր վերցրած լինել այդ աղբյուրից¹⁰: Գ. Խալաթյանը Բաումգարտների փորձն անհաջող համարեց: Նա շարունակեց Խորենացու վկայությունների քննադատությունը՝ դրանք գիտարկելով ավելի հանգամանորեն¹¹: Քանի որ Խալաթյանի անդրադարձն առավել ծավալունն ու փաստարկվածն է և, կարելի է ասել, նաև ամփոփումը նախորդ քննադատական ելույթների, ուղում ենք նրա տեսակետի վրա կանգ առնել փոքր-ինչ մանրամասնորեն: Խալաթյանի հիմնական դրույթները ներկայացնելով՝ միաժամանակ կփորձենք հարկ եղած դեպքերում արտահայտել որոշ նկատառումներ:

1. Խալաթյանը նախ նշում է, որ, հակառակ Խորենացու պնդման, Աֆրիկանոսի մասին չէր կարող վկայել (СВИДЕТЕЛЬСТВОВАТЬ) Հովսեպոսը, քանի որ ալրել է նրանից ավելի քան 200 տարի առաջ (նույն միտքն է հայտնել նաև Գարագաշյանը): Սա Խորենացուն ճիշտ չհասկանալու արգյունք է: «Աֆրիկանոսի ժամանակագրի, որում վկայ է Յովսեպոս» ասելով՝ պատմիչը ոչ թե նկատի ունի, որ Հովսեպոսը վկայել է Աֆրիկանոսի մասին, այլ՝ որ Աֆրիկանոսի պատմածը հաստատվում է Հովսեպոսի տեղեկություններով: Խորենացու խոսքերի այսպիսի բացատրության րանալի են նրա «Պատմություն» ուրիշ հատվածներ: Բավական է բերել հետևյալ օրինակը. II գրքի 48-րդ գլխում Խորենացին, պատմելով Արտաշես թագավորի՝ հռոմեացիներին հարկատու գառնալու և ուրիշ իրադարձությունների մասին, գրում է. «Եւ զայս մեզ ստուգապես պատմէ Ողիւմպ քուրմ Հանւոյ... որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգք վիսլասանաց»: Պատմագիրն այստեղ ոչ թե ասում է, որ պարսից մատյաններն ու հայ վիպասանների երգերը վկայում են Ողյուսի քրմի մասին, այլ՝ որ հաստատում են նրա պատմածը:

Խորենացու նույն խոսքերն ուրիշ տեսանկյունից, ըայց գարձյալ ոչ ճիշտ է մեկնաբանում Ռ. Թոմսոնը: Նա գրում է. «Մովսեսն ասում է, որ Հովսեպոսը և ուրիշները հաստատում են Աֆրիկանոսին այն դեպքերում,

9 A. Carrière. Op. cit., p. 365. Մոտավորապես նույն կարծիքին է Ռ. Թոմսոնը. տե՛ս Moses Khorenats' i. History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by R. W. Thomson, Cambridge (Mass.), London, 1978 (այսուհետև՝ Moses Khorenats' i), p. 146, n. 1.

10 A. Baumgartner. Über das Buch die "Chrie". – ZDMG, Heft III, Leipzig, 1886, S. 506–512.

11 Г. Халатянц. Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренского. Ч. 1, М., 1903, с. 40–43, 56, 68.

երբ վերջինս Հայաստանին վերաբերող նյութ է քաղում Եղեսիայի դիվանից»¹²: Խորենացին չի կոնկրետացնում, թե Հովսեփոսը և ուրիշները հաստատում են մասնավորապես Եղեսիայի դիվանից վերցված տեղեկությունները, այլ նկատի ունի, որ առհասարակ Աֆրիկանոսի տվյալների վերաբերյալ վկայություններ ունեն նաև Հովսեփոսը և ուրիշ հույն հեղինակներ:

2. Խալաթյանցը «կասկածելի» է համարում պատմիչի մյուս տեղեկությունը, որ, ըստ նրա, «Խորենացին վերադրում է Եվսեբիոսին («Եկեղեցու պատմություն», I, 13), թե իբր Աֆրիկանոսն իր ժամանակագրության V գրքում, օգտվելով Եղեսիայի դիվանից, պատմել է մեր (հայ) առաջին թագավորների գործերի մասին»: «Պարզվում է, — դրում է նա, — որ, նախ, Եվսեբիոսի «Եկեղեցու պատմություն» Խորենացու նշած գլխում Աֆրիկանոսի մասին խոսք չկա»: Սա դարձյալ Խորենացու շարադրանքի սխալ բացատրություն է: Պատմիչը նկատի չունի, որ «Եկեղեցու պատմություն» համապատասխան գլխում հիշատակվում է Աֆրիկանոսը, և որ Եվսեբիոսն է վկայում, թե նա, Եղեսիայի դիվանից օգտվելով, պատմել է հայ առաջին թագավորների գործերի մասին: Նորից մեջբերենք նրա խոսքերը. «...Մեղէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի: Եւ վկայ քեզ ի մտոյ երաշխաւորեսցէ եկլէաիստէ դիրք Եւսեբի Կեսարացւոյ... Գտցես յառաջին հագներգութեանն յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յԵղեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱբգար»: Հստակ է, որ Խորենացին Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունը» վկայակոչում է՝ միայն հաստատելու համար Եղեսիայի դիվանում հայ առաջին թագավորների գործունեության վերաբերյալ տվյալների գոյությունը: Եվսեբիոսի կողմից Աֆրիկանոսի հիշատակման մասին խոսք չկա: Մեջբերենք նաև «Եկեղեցու պատմություն» համապատասխան հատվածը. «...էր գրեալ ի նոսա [ի քարտէսս Ուրհայի - Ա. Թ.] ամենայն ինչ որ միանգամ գործեցաւ յառաջնոց անտի մինչև ցԱբգար» (I, 13)¹³: Հարկ չկա Խորենացու կողմից այստեղ որևէ «մեղանչում» որոնելու: Նրա սխալն այն է, որ նույնացնում է Օսրոյենեի և Հայաստանի պատմությունը, իսկ «առաջնոց» գործերը վերադրում Հայաստանի թագավորներին: Այդ սխալն ունի որոշակի հիմք, որ ցույց է տալիս ինքը՝ Խալաթյանցը: Եղեսիան հայկական քաղաք և Արդարին հայ թագավոր համարելու ավանդույթը տարածված է եղել Խորենացուց առաջ: Ի դեպ, Աբգարի և նրանից սկիզբ առած դինաստիայի հայկական ծագման մասին վկայում են նաև ուրիշ աղբյուրներ¹⁴:

3. Խալաթյանցը թերահավատություն է վերաբերվում Եղեսիայի դիվանին: «Դիվանները Խորենացուն անհրաժեշտ են՝ իր երևակայական պատմություններն արդարացնելու համար»: Բայց այդ դիվանը հիշատակված է նաև Եվսեբիոսի «Եկեղեցու պատմության» մեր հենց նոր մեջբերած

12 Moses Khorenats' i, p. 26-27.

13 Եւսեբիոս Կեսարացի. Պատմութիւն եկեղեցւոյ. Վենետիկ, 1877:

14 Տե՛ս, օրինակ, Անանուս Եգեսացի. Ժամանակագրութուն, թարգմանությունը բնագրից, առաջարանը և ծանոթագրությունները Լ. Հ. Տեր-Պետրոսյանի. — Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին (Ասորական աղբյուրներ, Բ), 12. Երևան, 1982, էջ 195-196:

Հատվածում: Խալաթյանցի կարծիքով եթե ղիվանը նույնիսկ գոյություն է ունեցել, ապա այնտեղ հաղիվ թե լինեին հայ թագավորների մասին տվյալներ: Այս ենթադրությունը հիմնավորված չէ: Ընդհակառակը, միանգամայն հնարավոր է, որ մշակութային կենտրոն Ունհայում պահպանին նաև Հայաստանին վերաբերող նյութեր. գոնե այն ժամանակվանից, երբ Եղեսիայի թագավորությունը Տիգրան Մեծի օրոք մտավ նրա տերություն կազմի մեջ:

Խալաթյանցի այս և նախորդ դրույթներին նման է Թոմասնի կարծիքը. «Մովսեսի «ղիվանների» հանդեպ հավատն ավելի է խախտվում նրա ակներևորեն կեղծ այն պնդմամբ, որ Եվսեբիոսն իր «Եկեղեցու պատմության» մեջ (I, 13) վկայում է, թե Եղեսիայում կային Հայաստանին վերաբերող ղիվաններ: Քանզի Եվսեբիոսը միայն ասում է, որ Եղեսիայի ղիվաններում ինքը գտել է Եղեսիայի Արդար թագավորի և Հիսուս Քրիստոսի նամակագրությունը»¹⁵: Այս առթիվ նշենք միայն, որ Եվսեբիոսը, բացի այդ նամակագրությունից, հստակորեն նկատի ունի նաև Եղեսիայում պահվող այնպիսի աղբյուրներ, որոնցում գրված էր «ամենայն ինչ որ միանգամ գործեցաւ յառաջնոց անտի մինչև ցԱբգար»: «Դիվանների հարցին», Թոմասնի ներածականի քննադատության առիթով, անդրադարձել է Գ. Սարգսյանը: Նա եզրակացնում է, թե Եղեսիայի ղիվանը հավանաբար իրոք գոյություն է ունեցել, և Մովսեսն էլ այնտեղ եղել է¹⁶:

4. Տարակուսանքի տեղիք է տալիս Եվսեբիոսի տեքստի փոքր-ինչ կամայական վկայակոչումը, քանի որ կեսարացի եպիսկոպոսը գրում է «մինչև ցԱբգար», իսկ Խորենացին՝ «մինչև ցԱբգար, և զկնի Աբգարու մինչև ցերուանդ»: Դա, ըստ Խալաթյանցի, «ուղղակի կասկած է հարուցում և մատնում հեղինակի ծածուկ նպատակը»: Տրամաբանակա՞ն է արդյոք, որ Խորենացին, «ծածուկ նպատակ» ունենալով, դիմեր այդպիսի բացարձակ ու հեշտ բացահայտելի կեղծիքի: Նա չէ՞ր գիտակցի, որ իր վկայությունը ստուգելի ցանկացող ամեն ոք պարզապես կբացի Եվսեբիոսի գրքի համապատասխան էջը և խաբեությունը դյուրավ կհայտնաբերի: Թվում է, թե պատմիչը «մինչև ցԱբգար, և զկնի Աբգարու մինչև ցերուանդ» դրելով չի մտածել, որ կեղծիք է թույլ տալիս. ուզում ենք ասել իր «Պատմության» այս հատվածը շարադրելիս նա «Եկեղեցու պատմությունը» ձեռքի տակ չի ունեցել և այն որպես աղբյուր վկայակոչում է հիշողությամբ: Աղբյուրների անգիր օգտագործման Խորենացու այս մեթոդի մասին ժամանակին դրել է Գ. Սարգսյանը¹⁷: Նրանից առաջ նույն երևույթը թարգմանական դրականության մեջ (Փիլոն Եբրայեցու երկերից մեկի հայերեն թարգմանության առիթով) նկատել է և դրա վերաբերյալ ակնարկ ունի Հ. Լևին¹⁸: Պատմիչն ինքը խոստովանում է, որ նաև հիշողությամբ է գրել իր «Պատմության» առաջին երկու գրքերը. «Այլ որչափ ջան և յիշո-

15 Նույն տեղում, էջ 13:

16 Г. X. С а р к и с я н. «История Армении» Мовсеса Хоренаци. Ереван, 1986, с 35–36.

17 Գ. Ն. Ս ա Ր Գ ս յ ա ն. Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ. — «Բանբեր Մատենադարանի», 1956, N 3, էջ 33:

18 H. L e v y. The Pseudo-Philonic "De Jona." Part I. The Armenian Text with a Critical Introduction. London, 1936, p. 10.

ղութիւն բաւեցին՝ պատմեցաք ստուգապէս ի մեծէն Աղեքսանդրէ մինչև ի վախճան սրբոյն Տրդաաայ» (III, 1), քանի որ ձեռքի տակ չեն եղել որոշ կարևոր աղբյուրներ. «...ոչ մատենագրութիւնք Դիողորի հուպ առ մեզ են» (ն. տ.), և՛ «...միթէ մատեա՞ն մերձ կայցէ ինձ» (I, 3)¹⁹: Ակներևորեն որոշ աղբյուրներ խորենացին օգտագործել է հիշողութեամբ: Սա առանձին ուսումնասիրութեան նյութ է, որին կանգնադառնանք առաջիկայում: Առայժմ հստակ է հետևյալը. եթե Եվսեբիոսի գիրքն այդ պահին պատմիչի ձեռքի տակ չիներ, նա իր մեկենասին այն փնտրել չէր տա Գեղարքունիքում, Սյունյաց գավառում, այլ կվկայակոչեր իր մոտ եղած օրինակը:

5. Խորենացին, ըստ ինքնաթղթի, հազիվ թե կարողանար Աֆրիկանոսի «Ժամանակագրութունից» Հայաստանի պատմութեան համար պիտանի նյութ քաղել, քանզի ոչ Եվսեբիոսի, ոչ էլ ուրիշ հեղինակների մոտ պահպանված հատվածներում չկա որևէ ակնարկ, թե այդ ժամանակագիրը հայերի մասին ինչ-որ բան է գրել: Նույն կարծիքին է Թոմասը. «Այն [Աֆրիկանոսի «Ժամանակագրութունը» – Ա. Թ.] օգտագործած պատմագիրներից ոչ մեկը... հիմք չի տալիս կարծելու, թե Հուլիոս Աֆրիկանոսը գրել է հայ թագավորների գործունեութեան մասին»²⁰:

Ինչպե՞ս կարող էր Աֆրիկանոսը, իր գրքում ընդգրկելով վիթխարի մի ժամանակահատված (սկսած աշխարհի ստեղծումից մինչև մ. թ. 221 թ.), բոլորովին չանդրադառնալ Հայաստանին, գոնե նշանավոր Արտաշես I-ի, Տրդրան II-ի կամ Արտավազդ II-ի գործունեութեանը. նրանք հիշատակվում են իրենց ժամանակի պատմութեանն առնչվող բոլոր նշանակալի աղբյուրներում: Եվ իրո՞ք հետագա հեղինակների մոտ պահպանված ոչ մի հատվածից չի երևում, թե Աֆրիկանոսը գրել է հայ թագավորների մասին: Սինկելլոսի «Ժամանակագրութեան» մեջ մեր ուշագրութունը գրավեց մի տեղեկութուն: Հրեաստանի պատմութեան հայտնի գրվագներից մեկի՝ քահանայապետ ու թագավոր Հյուրկանոսի և նրա եղբոր՝ Արիստոբուլոսի համարտութեան մասին Սինկելլոսը գրում է²¹. «Ի վերջո, հրեաների գինակցութունից զրկվելով, Հյուրկանոսն Անտիպատրոսի հետ գալիս է Դամասկոս, Մեծն Պոմպեյոսի մոտ, որ այդ ժամանակ Հայաստանից եկել էր Ասորիք՝ Միհրդատի ու Տրդրանի, այլև Աղվանքի, Իբերիայի, Կոլքիսի և ասորեստանցիների դեմ տարած իր հանրահայտ հաղթանակից հետո»²²: Սինկելլոսը, Հրեաստանի այս իրադարձութունների մասին պատմելիս, հիշատակում է երկու կարևոր աղբյուր՝ Հովսեպոս Փլավիոս և Հուլիոս Աֆրիկանոս: Նրանք վկայակոչվում են նաև մեր մեջբերած հատվածին անմիջապես նախորդող պարագրաֆում²³: Հովսեպոսն «Աղվանքի, Իբերիայի, Կոլ-

19 Հմմտ. Ն. Բիւրաւոյ և Մ. Միւսեան. Մովսիսի խորենացւոյ «Պատմութիւն Հայոց» (ժողովածու). Ժնև, 1991, էջ 74:

20 Moses Khorenats' i. p. 13.

21 Հին հունարեն այս և մյուս հատվածները հայերեն մեջբերում ենք մեր թարգմանութեամբ:

22 «...Λοιπὸν τῆς Ἰουδαίων συμμαχίας Ἰρκανὸς ἀφαιρεθεὶς ἀπὸ Ἀντιπάτρου τὴν Δαμασκὸν καταλαμβάνει, πρὸς Μαγνὸν Πομπήιον τὸν τηνικαῦτα καταλαβόντα ἐξ Ἀρμενίας τὴν Συρίαν μετὰ τῆς πολυθρυσλήτου ἀριστείας κατὰ Μιθριδάτου καὶ Τιγράνου Ἀλβανίας τε καὶ Κολχίδος καὶ αὐτῶν Ἀσσυρίων...» St' u Georgius Syncellus et Nicephorus Cp. (Corpus Scriptorum Historiae Byzantinae), t. 1. Bonnae, 1829 (այսուհետև՝ GS), p. 563.

23 GS, p. 561.

Կուլքիսի և ասորեստանցիների դեմ» Պոմպեյոսի տարած հաղթանակներին չի անդրադառնում: Նա չի պատմում նաև հռոմեացի զորավարի ու Միհրդատի զորքերի միջև տեղի ունեցած հայտնի ճակատամարտի և վերջինիս պարտությունից մասին, այլ սոսկ նշում է, որ Երիթով քաղաքի մոտ Պոմպեյոսը լսեց Միհրդատի մահվան լուրը (B. J., I, 138²⁴): Իսկ Տիգրանի մասին միայն ասում է, թե երբ Պոմպեյոսը նրա դեմ պատերազմում էր Հայաստանում, իր Սկավրոս զորավարին ուղարկեց Ասորիք (B. J., I, 127): Հյուրկանոսի և Անտիպատրոսի՝ Պոմպեյոսի մոտ դալը նա հիշատակում է, ընդհանուր առմամբ, նրանք զրկվում են արար դաշնակիցներից (των Ἀρχάβων ἀφαιρέθεντες), մինչդեռ համաձայն Սինկելլոսի՝ «հրեաների զինակցությունից» (Ἰουδαίων συμμαχίας): Այսպիսով՝ Սինկելլոսի հիմնական աղբյուրը տվյալ դեպքում Հովսեպոսը չէ: Ուրեմն՝ նա պետք է օգտված լինի նախորդ պարագրաֆում իր նշած երկրորդ կարևոր աղբյուրից՝ Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից»: Եթե ընդունենք այս հավանական ենթադրությունը, պետք է ընդունենք նաև, որ Աֆրիկանոսն անդրադարձել է առնվազն Տիգրան II-ին վերաբերող փաստերի:

6. Իր այս գրություններից ելնելով՝ Խալաթյանցը չի նշում որևէ հատված, որ Խորենացին կարող է քաղած լինել Աֆրիկանոսից: Չհավատալով պատմիչի ձեռքի տակ այս աղբյուրի առկայությանը՝ նա, ինչպես ուրիշ դեպքերում, փորձում է գտնել Խորենացու իրական աղբյուրները: Արտաշես I-ի պատմության համար, ըստ նրա, այդպիսի աղբյուրներ են եղել Կեղծ-Կալլիսթենեսի, Եպիփանես Կիպրացու, Կղեմես Ալեքսանդրացու, Մալալասի, Ս. Գրքի, Ագաթանգեղոսի, Փավստոսի, Անանիա Շիրակացու որոշ տեղեկություններ, նկարագրություններ կամ առանձին արտահայտություններ (երեք կարճ գլուխների համար այսքան ենթադրյալ աղբյուրների թվարկումն արդեն իսկ անհավանական է դարձնում Խալաթյանցի կարծիքը): Նա այս դեպքում Խորենացու աղբյուրը չի համարում ոչ միայն Աֆրիկանոսին, այլև պատմիչի հիշատակած մյուս չորս հեղինակներին՝ Պոլիկրատես, Եվագորաս, Սկամանդրոս, Ֆլեգոն: Այս Խալաթյանցը, հետևելով Գուտշմիդին և Կարրիերին, նշում է, որ Տիգրան II-ի և Արտավազդ II-ի պատմության նյութը Խորենացին քաղել է միայն Հովսեպոսից: Տիգրան II-ի մասին տեղեկությունների առիթով նույնն է ասում նաև Ատ. Մալխասյանցը²⁵, իսկ Արտավազդ II-ի մասին՝ Հ. Մանանդյանը²⁶: Այս կարծիքը, փոքր-ինչ այլ կերպ, կրկնում են Գ. Սարգսյանը²⁷ և Մահենբերը²⁸:

Իր սովորական մոտեցմամբ Խալաթյանցն Արագած թագավորին վերաբերող ութ գլուխների աղբյուրներ է համարում Եվագրոսի «Եկեղեցու

24 Josephus. The Jewish War. With an English translation by H. St. J. Thackeray. Cambridge (Mass.). London, 1967 ff. (Loeb Classical Library).

25 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե Ն Ա ց ի. Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ դոկտոր Ստ. Մալխասյանցի. Երևան, 1940, էջ 292, ծան. 149:

26 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. - Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 279:

27 «Տիգրանի և Արտավազդի ժամանակաշրջանի պատմությունը գրեթե ամբողջովին գրված է Հովսեպոսի տվյալների հիման վրա». տե՛ս Գ. Մ ա Ր Գ ս յ ա ն. Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի գահատարիների քանակն ըստ Խորենացու. - «Լրագեր հասարակական գիտությունների», 1967, N 12, էջ 67:

28 Moïse de Khorene. Histoire de l'Arménie, Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahe. Paris, 1993, p. 67.

պատմությունը», Լաբուբնային վերադրվող «Թաղեոս առաքյալի վարդապետությունը» պարականոն գրվածքը (որը հիշատակում է նաև Խորենացին) և Հովսեպոսի երկու երկերը, իսկ Արշամ Թագավորին վերաբերող նախորդ երկու գլուխների աղբյուրներ՝ դարձյալ Հովսեպոսին և Լաբուբնային²⁹: Վերջապես նա Աֆրիկանոսին Խորենացու աղբյուրը չի համարում նաև Սանատրուկ Թագավորի պատմությանն անդրադառնալիս՝ որպես իրական աղբյուրներ նշելով Լաբուբնայի նույն գրվածքը և Փավստոսի «Պատմությունը»: Ավելացնենք, որ Խալաթյանցը, փաստորեն, Խորենացու «Պատմության» II գրքի վերոհիշյալ գլխի բովանդակությունն ընկալել է այնպես, թե պատմագիրն, ըստ իր հաղորդման, Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից» պետք է օգտված լինի մինչև II գրքի 48-րդ գլուխը, որտեղ նա, որպես իր հետագա շարադրանքի հիմնական աղբյուր, հիշատակում է Ողյուժյալ քրմի մեհենական պատմությունը, այսինքն՝ Արտաշես I-ի գահակալությունից մինչև Արտաշես II-ի գահակալության սկիզբը, «մոտ 200 տարվա ժամանակահատված»³⁰:

Խալաթյանցի ուսումնասիրությունից հետո, որքան գիտենք, չի եղել մեզ հետաքրքրող խնդրին որևէ նշանակալից անդրադարձ (Թոմասի դիտողությունները նշեցինք Խալաթյանցի կարծիքի հետ զուգահեռաբար): Աֆրիկանոսը կարճ հիշատակվում է Խորենացուն նվիրված երկու համեմատաբար նոր աշխատություններում: Գ. Աարգսյանը նշում է, որ նրա «Պատմության» Աֆրիկանոսին առնչվող հատվածն առայժմ դժվար է բացատրել (նկատի ունի՝ այնքան ժամանակ, քանի դեռ չեն գտնվել խնդրի վրա լույս սփռող նոր տվյալներ): Ըստ նրա՝ Խորենացին Աֆրիկանոսին իր աղբյուրն է համարում II գրքի 10-25-րդ գլուխների համար, մինչև 26-րդ գլխում իր մյուս աղբյուրից՝ Լաբուբնայից օգտվելը³¹:

Վերջապես Աֆրիկանոսին առնչվող դիտողություն ունի Խալաթյանցի Հայագետ Ջ. Տրայինան: Նա հավանական է համարում, որ Խորենացին, եթե նույնիսկ չի կարդացել Եդեսիայի դիվանի նյութերը, ապա գոնե տեսել է այդ դիվանը³²:

Արդ, վերընթերցելով Խորենացուն և հիմք ընդունելով նաև մինչև այժմ ասվածը, նախ փորձենք ճիշտ հասկանալ «Պատմության» II գրքի 10-րդ գլխի բովանդակությունը:

1. «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Աֆրիկանոսի»: Այստեղից չի հետևում, թե Խորենացին Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից» անպայման օգտվել է հաջորդ տասնհինգ գլուխները շարադրելիս, առավել ևս՝ մոտ 200 տարվա ժամանակաշրջան ներկայացնելու համար: «Սկիզբն արասցուք պատմել» («կսկսենք պատմել»)՝ կարող է վերաբերել մի փոքր հատվածի, ասենք՝ միայն Արտաշես I-ի պատմությանը կամ այդ պատմության ընդամենը մի քանի դրվագների: Բայց և չի կարող բացառվել, որ սույն աղբյուրը Խորենացուն նյութ է մատակարարել

29 Г. Х а л а т я н ц. Ук. соч., с. 74–76.

30 Նույն տեղում, էջ 40:

31 Г. Х. С а р к и с я н. Ук. соч., с. 32.

32 G. T r a i n a. Il complesso di Trimalcione (Movses Xorenac'i e le origini del pensiero storico armeno). Venezia, 1991, p. 61–62.

նաև Հետագա շարադրանքի համար: Կարճ ասած՝ ուզում ենք շեշտել, որ պատմիչի խոսքերը զերծ են որևէ որոշակիությունից, և դրանց միջոցով հնարավոր չէ սահմանազատել Խորենացու կողմից Աֆրիկանոսի տվյալների օգտագործման ծավալը:

Խնդիրն ավելի է բարդանում Աֆրիկանոսի և Հովսեպոսի անուններին կողք-կողքի հիշատակմամբ: Հայտնի է, որ այս երկու պատմագիրներն իրենց երկերում առիթներ են ունեցել անդրադառնալու նույն իրադարձություններին: Հետագա հեղինակները (Եվսեբիոս Կեսարացի, Սինկլլոս և ուրիշներ) նրանց դրվածքներից հաճախ օգտվել են ղուղահանությամբ: Ուստի առանձին դեպքերում դժվար է որոշել՝ Խորենացու աղբյուրը Հովսեպոսն է, թե՞ Աֆրիկանոսը: Թվում է, օրինակ, որ Տիգրան II-ի և Արտավազդ II-ի պատմության նյութը հիմնականում վերցված է Հովսեպոսից, սակայն Խորենացին կարող էր որոշ տեղեկությունների ծանոթ լինել նաև Աֆրիկանոսի միջոցով:

Նույնքան անորոշ է «ի հինգերորդ դրոցն Ափրիկանոսի» արտահայտությունը. վկայակոչվող «Ժամանակագրության» ամբողջ V գլխից է ծանոթ եղել Խորենացուն, թե՛ միայն ուրիշ հեղինակի մոտ պահպանված հատվածներ, հին հունարենով, թե՛ հայերեն թարգմանությամբ: Պատմագիրն այս մասին նույնպես ստույգ չի արտահայտվում, և դարձյալ դժվար է որոշակի պատասխան գտնել:

2. «Քանզի նա բովանդակ փոխադրեաց որ ինչ ի քարտէսս դիւանին Եդեսիայ, որ է Ուռհայ, որ յաղագս թագաւորացն մերոց պատմէր»: Խորենացուն տեղեկություն է հասել, թե Նուրիոս Աֆրիկանոսը թարգմանել (կամ ընդօրինակել) է Եդեսիայի դիվանում մեր թագավորների մասին եղած բոլոր տվյալները: Նա չի ասում, որ այդ ամբողջ նյութն իր ձեռքի տակ է իբրև աղբյուր:

3. «Մատեանքն ի Մծբնայ էին փոխեալ անդր և ի Սինոպայ Պոնտոսէ ի մեհենական պատմութեանցն»: Մատյանների՝ Եդեսիա տեղափոխման մասին Խորենացին հիշատակություն ունի նաև II դրքի 27-րդ (Մծբնից) և 38-րդ (Աինոպից) գլուխներում: Որևէ հիմք չկա կասկածելու պատմիչի այս տեղեկության հավաստիությունը:

4. «Մի ոք անհաւատասցի, քանզի և մեզէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի»: Սա պետք է հասկանալ ուղղակիորեն. Խորենացին տեսել է դիվանը, բայց չի ուսումնասիրել այնտեղի նյութերը: Ըստ երևույթին նա Եդեսիայում եղել է շատ կարճ ժամանակ և հասցրել է միայն ընդհանուր տեղեկություններ ստանալ դիվանի մասին: Այդպես է երևում նաև III դրքի 62-րդ գլխից, որտեղ պատմագիրը նկարագրում է այն ժամանակվա մշակութային կենտրոնները կատարած իր ճամփորդությունը. «...յեդեսացւոցն հասանէաք քաղաք. թեթևակի ընդ խորս դիւանին նաւեալ՝ անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել...»: Խորենացու խոսքերից չի հետևում նաև, թե նա Եդեսիայում ծանոթացել է, մասնավորապես, Հայաստանին վերաբերող նյութերի: Դրանց առկայությունը հաստատելու համար նա վկայակոչում է ոչ թե իր անձնական դիտարկումները, այլ Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունը»:

5. Կեսարացի եպիսկոպոսի գրքի համապատասխան գլխին և Եդեսիայի դիվանում հայ թագավորների գործունեություն մասին տվյալների առկայությունն առնչվող խորենացու վկայություններին անդրադարձանք իսլաթյանցի դիտողությունների առիթով:

6. «Որ և այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի»: Պատմիչը սոսկ ենթադրում է կամ իմացել է, որ Եվսերիոսի հիշատակած նյութերը դեռևս պահվում են Եգեսիայի դիվանում: Համենայն դեպս այս տվյալն էլ «Եկեղեցու պատմության» նույն հատվածում ղուգահեռ ունի (I, 13). «...Սոքա [քարտէսք Ուրհայի - Ա. Թ.] մինչև ցայսօր ժամանակի պահեալ գտանին անգ»:

Այսպիսով խորենացու «Պատմության» այս գլխի բովանդակությունը պետք է հասկանալ բառացիորեն, առանց սուբյեկտիվ մեկնարանությունների ու հետևությունների: Նրա շարադրանքը պարզապես անորոշ է, կոնկրետությունից և անհրաժեշտ մի քանի մանրամասներից զերծ, երևույթ, որ խորթ չէ հին պատմագրության ընդհանրապես:

Այժմ հետևենք հաջորդ գլուխների բովանդակությանը: Արտաշես I-ի պատմությանը խորենացին նվիրում է երեք գլուխ (II, 11-13): Ակնհայտ է, որ նա օգտվել է մեկից ավելի աղբյուրներից, առնվազն մեկ հայկական և մեկ հունական: Ըստ երևույթին, պատմագրի ձեռքի տակ եղել է նաև պարթևական իրականությունը վերաբերող մի աղբյուր, հնարավոր է՝ մի արքայացանկ, որ բովանդակել է պարթև թագավորների անուններն ու գահակալության տարիները³³, և իր ժամանակագրությունը, նաև մեզ հետաքրքրող հատվածներում, խորենացին կառուցել է այդ աղբյուրի տվյալների օգտագործմամբ: Այսպես, Արտաշես I-ը, ըստ խորենացու, դահակալել է «պարսից» Արշական թագավորի քսանչորսերորդ տարում: Բացի այդ, հիշյալ գլուխներում կան զուտ Հայաստանի ներքին կյանքին առնչվող տեղեկություններ, որոնք առնված են բանավոր ավանդություններից կամ հայկական միջավայրում ստեղծված գրավոր աղբյուրից. օրինակ՝ 11-րդ գլխում. Արտաշեսը «տայ զՏիգրան որդի իւր ցպատանի ոմն Վարաժ անուն, որդի Դատայ, որ ի զաւակէ Գառնկայ՝ որ ի Գեղամայ... չէնս պարգևեալ նմա զՀրազդան գետով՝ յանուն նորա կոչի ազգն Վարաժնունի»:

Փորձենք առանձնացնել տեղեկություններ, որոնք կարող են վերցված լինել հունական աղբյուրից: Հայտնի է, որ պատմական Արտաշես I-ին (մ. թ. ա. 189-160) ավելի համապատասխանում է խորենացու մյուս Արտաշեսը³⁴ (II, 49-60), հակառակ ժամանակային խոշոր տեղաշարժին: Այդուհանդերձ, Արտաշեսյան հարստության հիմնադրին որոշ նմանություններ ունի նաև խորենացու Արտաշես I-ը (նրան պատմագիրը տանում է II դարի

33 Հմմտ. Գ. Խ. Ս ա ռ գ ս յ ա ն. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես խորենացին. Երևան, 1966, էջ 79-138:

34 Տե՛ս Գ. Տ ի ռ ա ց յ ա ն. Մովսես խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի մ. թ. ա. III-IV-րդ դարերի պատմության մասին. - «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 8 և հաջ., Գ. Խ. Ս ա ռ գ ս յ ա ն. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես խորենացին, էջ 139-236:

վերջ և *I*. դարի սկիզբ³⁵): Մ. Աբեղյանն ուղղակի գրում է, որ նրա իրական նախատիպը Մեծն Տիգրանի նախնին է, «Թագավորության հիմնադիրը»³⁶: Անաքրոնիզմները, պատմական անձերի և իրադարձությունների հետ կապված շփոթությունները տվյալ դեպքում մեզ համար կարևոր չեն:

Խորենացին Արտաշեսի մասին ասում է, որ նա, «...յառաջադէմ եղեալ՝ ոչ զերկրորդականն ունի գահ, այլ զաւագութեանն թեկն ածէ»: Սա պատմական իրականություն արձագանք է: Հայաստանը մ. թ. ա. III դարի վերջերին Սելևկյանների տիրապետության տակ էր: Սելևկյան թագավոր Անտիոքոս III-ը Մեծ Հայքում ստրատեգոս (կառավարիչ) էր նշանակել Արտաշեսին: Վերջինս, սակայն, «չկամեցավ երկրորդական գահը գրավել», այլ, օգտվելով բաբելոնյան իրավիճակից, 189 թ. իրեն հայտարարեց հայկական անկախ պետության թագավոր³⁷: Այնուհետև Խորենացին Արտաշեսին որակում է որպես «այր հպարտ և պատերազմասէր», որ միանգամայն համապատասխանում է նրա պատմական կերպարին: Արտաշեսը, ըստ Խորենացու, «զրամ առանձին զիր պատկերն հարկանէր»: Շատ հավանական է, որ, ուժեղ, անկախ պետություն ստեղծելով, նա շրջանառության մեջ է գրել սեփական դրամ (թեպետ այդպիսիք դեռ գտնված չեն³⁸): Վրացական «Քարթլիս ցխովրեբա»-ում ևս տեղեկություն է պահպանվել Արտաշեսի պատկերով հատված դրամի մասին³⁹:

Գլխի վերջում հիշատակվում է «ոմն Միհրդատ» (ի դեմս որի Խորենացին հավանաբար նկատի ունի Պոնտոսի «Միհրդատ» անունով թագավորներից մեկին⁴⁰) Դարեհի նախարար Միհրդատի («Միհրդատայ, Դարեհի նախարարի») սերնդից: Վերջինս պատմական գործիչ է, պոնտական-կապադովկյան իշխանական տոհմից, եղել է Դարեհ III-ի փեսան⁴¹. Նրան հիշատակում են Արրիանոսը, Պլուտարքոսը և Կեղծ-Կալլիսթենեսը: Կարող է թվալ, թե Խորենացու աղբյուրը Կեղծ-Կալլիսթենեսն է, բայց տեքստերի համեմատությունն այդպիսի եզրակացություն հիմք չի տալիս: Կեղծ-Կալլիսթենեսը Դարեհի նախարարին չի հիշատակում որպես Պոնտոսի Միհրդատներից մեկի նախնի: Խորենացու ձեռքի տակ եղել է ուրիշ աղբյուր, որի նյութն, իհարկե, նա գործածել է յուրովի, իր մեկնաբանությամբ:

35 Գ. Խ. Ս ա Ր գ ս յ ա ն. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը. Երևան, 1965, էջ 69:

36 Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայոց հին գրականության պատմություն. — Երկեր, Հ. Գ, Երևան, 1968, էջ 308:

37 Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). Հ. I, Երևան, 1971, էջ 521, 525: Կ. Տրեբերը նույնպես այս Արտաշեսին նույնացնում է պատմական Արտաշես I-ի հետ. տե՛ս K. B. T r e v e r. Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. — IV в. н. э.). М.—Л., 1953, с. 9—10.

38 Տե՛ս P. Z. B e d o u k i a n. A Classification of the Coins of the Artaxiad Dynasty of Armenia. — *Museum Notes*, 1968, N 14, p. 41—60.

39 Լ. Մ. Մ ե լ ի ք ս ե թ. — բ ե կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին. Հ. Ա, Երևան, 1934, էջ 160:

40 Ստ. Մալխասյանցի կարծիքով դա Միհրդատ Եվպատորն է. տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 288, ծան. 138:

41 Տե՛ս Realencyclopadie der klassischen Altertumswissenschaft, edd. A. Pauly, G. Wissowa, W. Kroll, 1893 ff. (այսուհետև՝ RE), Bd XV₂ (1932), s. v. Mithridates (2), col. 2157—2158 (Berne).

Հաջորդ գլխում խորենացին գրում է. «Յայնժամ հրաման տայ Արտաշես՝ զօր յարուցանել յարևելից և ի հիւսիսոյ բազում յոյժ... Եւ խաղայ այնուհետև յարևմուտս»: Այստեղ նույնպես հետաքրքիր հարազատություն կա պատմական իրականությունը: Սարարոնի հաղորդման հիման վրա Գ. Սարգսյանը եզրակացրել է, որ Արտաշես I-ը նախ իր երկրի սահմաններն ընդարձակել է դեպի արևելք, ապա տարածքներ է նվաճել հյուսիսում, որից հետո շարժվել դեպի արևմուտք⁴²: Խորենացու տեղեկությունից էլ հետևում է, որ Արտաշեսը նախ տիրել է արևելյան և հյուսիսային տարածքների, հետո հրամայել է իրեն օգնական զորքեր տրամադրել՝ դեպի արևմուտք առաջխաղացման համար:

Ապա նա պատմում է հեթանոսական աստվածների արձանների՝ Հայաստան տեղափոխման մասին: Ասիայում Արտաշեսը գտնում է Արտեմիսի, Հերակլեսի և Ապոլլոնի՝ պղնձաձուլ ոսկեզօծ արձանները (Հերակլեսի արձանը քանդակագործներ Սկիլլիսի և Դիպինոսի գործն էր) և դրանք բերել տալիս Հայաստան: Իսկ Հունաստանից ուղարկում է «Դիոսի», Արտեմիսի, Աթենասի, Հեփեստոսի և Աֆրոդիտեի արձանները⁴³: Թվում է՝ աստվածների այս անուններն առնված են հունական աղբյուրից: Հետաքրքիր է, որ Խորենացին այստեղ որպես Հունաստանի համարժեք գործածում է «Ելլադա» հունարեն անվանումը. նրա գրքում այն, բացի սույն դեպքից, հանդիպում է ընդամենը երկու անգամ (Հաջորդ 13-րդ գլխում, հունական մի աղբյուրից՝ Փլեգոնի տեքստից մեջբերված հատվածում, և մեկ էլ III գրքի՝ հունաբան լեզվով շարադրված 62-րդ գլխում, որտեղ Խորենացին նկարագրում է իր ճամփորդությունը): Մինչդեռ այլ դեպքերում պատմիչը Հունաստանը նախընտրում է կոչել հին Հայերենին ավելի հարազատ «Յոնք», «Յունաց երկիր», «Յունաց աշխարհ» անվանումներով: «Ելլադա»-ի գործածությունը, այն էլ հեթանոսական աստվածների հունական անունների կողքին, նշանակում է, որ Խորենացին տվյալ տեղեկությունը քաղել է հունական աղբյուրից (ավելացնենք, որ «Հեփեստոս» անվան սեռական հոլովածը՝ «Հեփեստոս» (տե՛ս նաև 14-րդ գլխում), հայերենում ավելի սովորական «Հեփեստոս»-ի փոխարեն⁴⁴, ճշգրտորեն վերցված է հունարենից. *Ἥφαίστος*): Այլ խնդիր է՝ հունական աղբյուրում այդ արձանների տեղափոխությունը վերագրված է եղել Արտաշես I-ին, թե՞ Պարսկաստանի որևէ թագավորի. օրինակ՝ Կյուրոս Մեծին (մ. թ. ա. 559-529) կամ Արտաքսերքսես II-ին՝ Դարեհ II-ի որդուն (մ. թ. ա. 405-359), որին, աստվածների արձանների պաշտամունքը Պարսկաստանում տարածելու առիթով, հիշում է Կղեմես Ալեքսանդրացին (*Prot., V, 57P.*):

42 ՀԺՊ, հ. I, էջ 531-534:

43 «...Գտեալ յԱսիայ պղնձաձուլ ոսկեզօծ սլատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպոլոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեցեն յԱրմաւիր: Զոր առեալ քրմապետացն... զԱպոլոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր, իսկ զՀերակլեայն գառնապատկերն, որ արարեալ էր ի Աիւղեայ և ի Դիպինոսէ կրետացւոյ... կանգնեցին ի Տարօն... յԵլլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդեայ, զԱթենայ, զՀեփեստոս, զԱֆրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս...»:

44 Հմմտ. Եվսեբիոսի «Ժամանակագրության» մեջ՝ «Եփեստոսայ». Եւսեբի Կեսարացու ժամանակականք երկմասնեայ. Մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 270: Տես նաև ՆՀԲ, s. v.:

Խալաթյանցը ենթադրում է, թե արձանների տեղափոխման գաղափարը Խորենացուն հուշել է հենց Կղեմեսի այդ հաղորդումը, ըստ որի՝ Արտաքսերքսես II-ը Բաբելոնում, Սուսայում և Էկբատանայում դրեց «Աֆրոդիտե-Անահիտի» արձանը (*Ἀφροδιτης Ἀναϊτιδος τὸ ἄγαλμα*): Այդպես ենթադրելու համար նրան համոզիչ հիմք է թվում Կղեմեսի դրվածքի մեկ ուրիշ հատվածում (IV, 42P.) Սկիլլիսի և Դիպինոսի անունների հիշատակումը⁴⁵: Դժվար է, Խալաթյանցին հետևելով, ուղղակի կապ տեսնել ալեքսանդրացի հեղինակի և Խորենացու հաղորդումների միջև, որոնցում արտացոլված են միանգամայն տարրեր իրադարձություններ: Իսկ երկու քանդակագործների անունները հիշատակում են նաև ուրիշ հեղինակներ, օրինակ՝ Պլինիոս Ավագը (N. H., XXXVI, 9-11, 14) և Պավսանիասը (II, 15, 1 և 22, 5), որոնց տեղեկություններից նույն հաջողությամբ կարելի կլիներ օգտվել: Սակայն, երևում է, Խորենացին ունեցել է ուրիշ աղբյուր:

Ուշադրության արժանի է, որ Սկիլլիսի ու Դիպինոսի անուններն առկա են նաև XI-XII դարերի բյուզանդացի ժամանակագիր Գեորգիոս Կեդրենոսի բանաքաղածո երկում⁴⁶: Նա վերաշարադրել է տարբեր հեղինակների տեղեկություններ և, ուրիշ աղբյուրների օգնությամբ, մեջբերում կամ վկայակոչում է նաև Աֆրիկանոսին: Նրա մեջբերումները (Սինկելլոսի միջոցով) օգտագործվում են՝ Աֆրիկանոսի «Ժամանակագրության» կորած բնագրի համապատասխան հատվածները ճշգրտելու համար⁴⁷: Հնարավոր է, որ երկու քանդակագործների՝ Կեդրենոսի հիշատակման սկզբնաղբյուրն Աֆրիկանոսի «Ժամանակագրությունն» է. իբրև պատմության քրիստոնեական-աստվածաշնչային ըմբռնման առաջին արտահայտություններից մեկը և հանրադիտարանատիպ գրվածք, այն առհասարակ անտիկ ժամանակաշրջանի ամենագլխավոր աղբյուրներից էր բյուզանդացի հեղինակների համար: Օ. Կարրիերը, որ հայերի հեթանոսական պաշտամունքի մասին Խորենացու տվյալների քննադատությանը նվիրեց մի առանձին ուսումնասիրություն⁴⁸, դրում է, թե Ակիլլիսի ու Դիպինոսի անունները տալիս

45 Г. Х а л а т я н ц. Армянский эпос в “Истории Армении” Моисея Хоренского. Ч. 1, М., 1896, с. 288-290.

46 „τὸ ἄγαλμα... Ἀθηναῖς... ἔργου Σκόλλιδος καὶ Διποίνου, («Աթենասի արձանը՝ Սկիլլիսի և Դիպինոսի դործը»): տե՛ս Georgius Cedrenus (Corpus Scriptorum Historiae Byzantinae), t. I. Bonnae, 1838, p. 564.

47 Տե՛ս PG, t. 10, col. 67-68, նաև՝ J. - M. R o s e n s t i e h l. Enosh, le premier. - Revue des Etudes Armeniennes, 1994-1995, N 25, p. 104. Մեջբերումներից մեկն առնչվում է Խորենացու «Պատմության» I գրքի 4-րդ գլխին, որի հավանական աղբյուրն, ըստ Ռ. Բաումգարտների, Աֆրիկանոսի «Ժամանակագրության» այդ հատվածն է. տե՛ս A. B a u m g a r t n e r. Op. cit., p. 506.

48 Տե՛ս A. C a r r i è r e. Les huit Sanctuaires de l'Arménie payenne, d'après Agathange et Moïse de Khoren. Etude critique, Paris 1895: Կարրիերը փորձում էր ապացուցել, որ Խորենացու այդ տվյալները (ներառյալ Արտաշես I-ին վերաբերող խնդրո առարկա հատվածը) պատմագիտական որևէ արժեք չունեն, քանի որ հորինված են Ագաթանգեղոսի «Պատմության» հիման վրա: Գ. Սարգսյանը, քննադատելով Կարրիերի կարծիքը, նշում է Խորենացու այնպիսի արժանահավատ տեղեկություններ, որոնք Ագաթանգեղոսի պատմածի հետ առնչություն չունեն (տե՛ս Գ. Ս ա Ր Գ ս յ ա ն. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, էջ 37-42): Հակառակ Կարրիերի, գիտնականները հետադառնում շեշտում են աստվածների արձանների տեղափոխման և հետևարար նրանց պաշտամունքի՝ Հայաստանում տարածման վերաբերյալ Խորենացու նշված տեղեկության կարևորությունը. տե՛ս K. B. T p e v e p. Ук. соч., с. 160-161; M. - L.

Կեդրենոսը կարող էր ձեռքի տակ ունենալ իտրենացու աղբյուրին մոտ մի գրվածք⁴⁹: Այսպիսով՝ որոշ հիմք կա ենթադրելու, որ իտրենացու և Կեդրենոսի աղբյուրը նույնն էր՝ Աֆրիկանոսի «ժամանակագրությունը»:

Պահպանված հատվածներից մեկում Աֆրիկանոսը խոսում է աստվածների արձանների մասին, այս դեպքում՝ կապված Կյուրոսի գործունեության հետ. «Քանզի այնտեղ, արքայական պալատից այն կողմ, Հերայի տաճարն է, որ կառուցեց կատարյալ բարեպաշտություն հետևորդ Կյուրոսը և ոսկե ու արծաթե արձանները կոչեց աստվածների անուններով»⁵⁰: Իսկ արձանների տեղափոխման մասին Աֆրիկանոսը կարող էր հիշատակած լինել մեկ այլ, չպահպանված հատվածում, և իտրենացին, հնարավոր է, Կյուրոսի վարժունքը վերագրել է Արտաշեսին, ինչպես որ լիդիացիների Կրեսոս թագավորին հաղթելը⁵¹: Այդ տեղեկությունը իտրենացին զուգակցել է հայերի հեթանոսական պաշտամունքի մասին իր ունեցած տվյալների հետ, և, երևում է, «Արտաշես» անվան տակ այս դեպքում էլ պետք է հասկանալ տարբեր թագավորներ (նաև՝ հենց Արտաշես I-ին, կամ մեկ ուրիշ հայ թագավորի, որի օրոք պաշտամունքային կենտրոններ են հիմնվել Հայաստանի տարբեր վայրերում), ինչպես որ 13-րդ գլխում:

Պատմիչը նշում է, թե Արտաշեսը թագավորել է քսանհինգ տարի. սա մոտ է նրա գահակալության իրական տևողությանը (հիշենք, որ Արտաշես I-ը իշխել է մոտավորապես մ. թ. ա. 189-160 թթ.):

Հաջորդ՝ 13-րդ գլխի մի հատվածից երևում է, որ իտրենացին ստույգ ժամանակագրական տվյալներ ունի: Ըստ նրա՝ «զժամանակս Կրիւսոսի երկերիւր ամաւ յառաջ քան զՆեքտաներայն, իսկ զՆեքտաներայ ժամանակս աւելի ևս երկերիւր ամաւ յառաջ եղեալ քան զառաջնոյն Արտաշիսի թագաւորի Հայոց»: Քանի որ Արտաշես I-ը իտրենացու կարծիքով թագավորել է մ. թ. ա. II դարի վերջում և I դարի սկզբում, ուրեմն եգիպտացիների վերջին բնիկ թագավոր «Նեքտաներոսի» (Նեկտաներոս II-ի)

C h a u m o n t. Bois sacres dans l'Armenie païenne. – *Revue des Etudes Arméniennes*, 1994–1995, N 25, p. 160.

49 A. C a r r i è r e. Les huit Sanctuaires de l'Armenie payenne, d'après Agathange et Moïse de Khoren, p. 25.

50 „Το γὰρ ἱερόν τῆς Ἑρας ἐστὶν ἐκεῖ ἐπέκεινα τῶν βασιλικῶν μελᾶθρων, ὅπου Κύρος ὁ πάσης εὐσεβείας γνάστης, κατεσκεύασε καὶ ἀνέθηκεν ὀνόματα θεῶν, ἀνδριαντας χρυσοῦς καὶ ἀργυροῦς...», S b ' u P G, t. 10, col. 100.

51 իտրենացին Կյուրոս Մեծի լիդիացիների դեմ տարած հաղթանակը վերագրում է Արտաշեսին. այս շփոթությունը որոշակի հիմք ունի. Հովսեպոսի «Հրեական հնախոսություն»-ում նշված է. «Պատահեց, որ Քսերքսեսի մահից հետո թագավորությունն անցավ նրա որդի Կյուրոսին, որին հույներն անվանում են Արտաքսերքսես» (= Արտաշես) – „Τελευτήσαντος δὲ Ξέρξου τὴν βασιλείαν εἰς τὸν υἱὸν Κύρον, ὃν Ἄρταξέρξην Ἑλληνας καλοῦσιν, συνέβη μεταβῆναι,» (A. J., XI, 184. տե՛ս J o s e p h u s. Jewish Antiquities. With an English translation by R. Marcus. Cambridge (Mass.), London, 1958 ff. (Loeb Classical Library)): նույնպիսի տեղեկություն կա Մինկելլոսի մոտ. „Κύρον... καλοῦμενον Ἄρταξέρξην,» («Արտաքսերքսես կոչվող Կյուրոսին») (GS, p. 461), որ կարող է վերցված լինել Աֆրիկանոսից: Հույն չորս հեղինակներից իտրենացու մեջբերումներում նույնպես Կրեսոսին հաղթողն անվանվում է «Արտաշես»: Սա է այն հիմքը, որ պատմիչին թույլ է տվել հիշատակվող նվաճումները վերագրել հայերի Արտաշես թագավորին: Անհրաժեշտ է ավելացնել, որ այդ չորս հատվածներում գործող տիրակալը նման է մի հավաքական կերպարի, որի նախատիպը ոչ միայն Կյուրոս Մեծն է, այլ նաև ուրիշ թագավորներ: Պատմական դեմքերի այսպիսի շփոթության պատճառ է եղել իտրենացու ձեռքի տակ տարբեր աղբյուրների առկայությունը և տարբեր «Արտաշեսներին» մեկ անձ համարելը:

տարիները («աւելի ևս երկերիւր ամալ յառաջ... քան... Արտաշէսի») պետք է համընկնեն մոտավորապես IV դարի կեսերին, իսկ Լիդիայի վերջին թագավոր Կրեսոսին՝ VI դարի: Սա լիովին համապատասխանում է պատմական իրականութեանը. Կրեսոսն իշխել է մ. թ. ա. 560-547 թթ., Նեկտաներո II-ը՝ 360-343 թթ.: Սինկելլոսն իր գրքում ներկայացրել է տարրեր երկրների գահակալների մանրամասն արքայացանկեր՝ մեծապես հիմնված Աֆրիկանոսի «Ժամանակագրության» վրա, որ կարող էր լավ աղբյուր լինել նաև Խորենացու այս հատվածի համար: Բյուզանդացի ժամանակագիրը, ըստ եզրպտացի պատմիչ Մանեթոսի տեղեկություն (ամենայն հավանականությամբ հենց Աֆրիկանոսի միջոցով, քանի որ Եվսեբիոսի «Ժամանակագրության» համապատասխան հատվածն ակներևորեն Աինկելլոսի աղբյուրը չէ) հիշատակում է Նեկտաներո թագավորին⁵². նույնպես և Խորենացին՝ մեր մեջբերած հատվածից առաջ. «Նեքտաներոսս այս վերջին թագաւոր եզրպտացուց, ի Մանեթոսէ պատմեալ, զոր ոմանք հայր Աղեքսանդրի ասացին»⁵³:

Գլխի շարունակությունը հույն չորս հեղինակներից մեջբերումները, առանձին ուսումնասիրությունների նյութ են: Այժմ դրանց մասին միայն ուզում ենք նշել հետևյալը: Հնարավոր է, որ այդ հատվածներին Խորենացին ծանոթ էր Աֆրիկանոսի միջոցով: Չորս հեղինակներից մեկը՝ Ֆլեգոնը, նրա «Ժամանակագրության» պահպանված մի հատվածում (որը վերաբերում է հենց Կյուրոսին) հիշատակվում է որպես աղբյուր. «Կյուրոսը պարսիկների թագավոր դարձավ, 55-րդ Օլիմպիադայի տարում... Ինչպես տեղեկանում ենք Պլիբիոսից ու Ֆլեգոնից»⁵⁴:

Այստեղ էլ Աինկելլոսի հետ հետաքրքիր զուգահեռ կա. «զԿրիւսոս մերոյ Արտաշէսի կալեալ», – գրում է Խորենացին (նաև՝ «Արտաշես... կալաւ զԿրիւսոս», «կալեալ զնա Արտաշէսի»). նրա օգտագործած «ունիմ» բայը, անցյալ ժամանակաձևերով («կալաւ», «կալեալ»), փոքր-ինչ օտարոտի է թվում Կրեսոսի նշանավոր պարտություն հիշատակման համար, բայց այն Սինկելլոսի գործածած *λαμβανω* բայի բառացի թարգմանությունն է. *„Κυρος... Κροίσον έλαβε,”*⁵⁵: Մինչդեռ գլխի սկզբում, երբ Խորենացին բառացիորեն կրկնում է Եվսեբիոսին⁵⁶, նա գրում է. «Կիւրոսի սպանեալ զԿրիւսոս»:

Հաջորդ ութ գլուխները (II, 14-21) նվիրված են Տիգրան II-ի (Միջինի) պատմությանը: Այն, ինչ Խորենացին վերցրել է Հովսեպոսից, հայտնի է. հնարավոր բոլոր (կամ գրեթե բոլոր) զուգահեռները բերված են իսլաթյանցի «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» աշխատության երկրորդ մասում. միշտ են դրանք համոզիչ թե ոչ առիթներ կունենանք տեսնելու ստորև: Պատմագիրը շարունակում է օգտագործել նաև զուտ հայկական միջավայրից իրեն հասած տվյալներ, ո-

52 GS, p. 486.

53 Թոմասը գտնում է (Moses Khorenats' i, p. 15), որ Խորենացու աղբյուրը Եվսեբիոսն է, սակայն նրա կարծիքը հիմնավորող բառացի զուգահեռներ չկան:

54 *„Κυρος Περσών έβασιλευσεν, ω̄ έτει 'Ολυμπιας ήχθη νε, ως εκ... Πολυβίου και Φλέγοντος έστιν ευρειυ...», St'u PG, t. 10, col. 73.*

55 GS, p. 446.

56 St'u Moses Khorenats' i, p. 149, n. 1.

րոնց մասին նշեցինք քիչ առաջ (օրինակ՝ մեհյանները շինելու կամ Բագրատունիների հետ Տիգրանի հարաբերությունների մասին 14-րդ գլխի տեղեկությունները, հռոմեացի զորավար Լուկուլլոսի «յեղուզակ Վայկուն» անվանումը և այլն): Փորձենք նրա շարադրանքում գտնել ստույգ տեղեկություններ, որոնք Հովսեփոսից չեն վերցված:

Գ. Սարգսյանը ժամանակին գրել է, որ Խորենացին ճիշտ կամ գրեթե ճիշտ է նշում Տիգրան II-ի գահակալության տարին սելևկյան տոմարի 219 թ. (մ. թ. ա. 93): Նա նույնիսկ գտնում էր, որ եթե հաստատվի Խորենացու այս ցուցման՝ Աֆրիկանոսի «ժամանակագրությունից» առնված լինելը, ուրեմն սկստք է նախընտրել սույն թվականը, այլ ոչ թե 95-ը, որ հիմնված է Պլուտարքոսի (Luc., 21)՝ ոչ այնքան որոշակի տեղեկություն վրա⁵⁷:

Խորենացին այնուհետև պատմում է, որ Տիգրանը «ընդգծմ ելթայ ղորացն Յունաց» (= հռոմեացիների), որի հետևանքով նա, «ի... Միհրգատ հաւատացեալ զՄաթաք և զհոգս Մէջերկրայցն և զօր բազում թողեալ առ նմա՝ դառնայ յաշխարհս մեր»): Խոսքը դեպի Կապադովկիա Տիգրանի կատարած արշավանքի մասին է, որ իրոք տեղի է ունեցել նրա դահակալության սկզբում (ինչպես որ Խորենացու մոտ է), մ. թ. ա. 93 թ.⁵⁸, իբրև հայպոնտական դաշինքի հետևանք⁵⁹: Այդ դաշինքի մասին, որ Տիգրանի հետ Միհրգատ եվպատորը կնքեց «հռոմեացիների [դեմ] պատերազմում» ("romani belli"), պահպանվել են Օգոստոս կայսեր ժամանակաշրջանի պատմագիր Պոմպեյոս Տրոգոսի տեղեկությունները (II գ. հռոմեացի հեղինակ Հուստինոսի միջոցով): Դաշնակիցները պայմանավորվել էին, որ նվաճված քաղաքներն ու հողերն անցնելու են Միհրգատի գերիշխանության տակ, իսկ մարդիկ և տեղաշարժման ենթակա ամեն ինչ պատկանելու են Տիգրանին (XXXVIII, 3)⁶⁰: Սա համընկնում է Խորենացու տեղեկությանը, թե՛ Միհրգատին թողնելով Մազական (Մաթաքը) և «Միջերկրյա կողմերը» Տիգրանը վերագառնում է Հայաստան: Կապադովկիայի և մասնավորապես այդ երկրի մայրաքաղաք Մազակայի նվաճման մասին տեղեկություն ունի նաև Ստրաբոնը. «Մազական գտնվում է Պոնտոսից մոտ ութ հարյուր ստադիոն հեռու դեպի հարավ... Տիգրան Արմենը նրանց (մազակացիներին - Ա. Թ.) գրեց ծանր դրուծյան մեջ, երբ արշավեց Կապադովկիա. քանզի բոլորին տեղահանեց դեպի Միջագետք, և Տիգրանակերտը հիմնականում նրանց միջոցով բարեկարգվեց» (XII, 2, 9)⁶¹: Այս հա-

57 Գ. Խ. Սարգսյան. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 64: Հետագայում Գ. Սարգսյանը «Հայոց պատմության» այս և հաջորդ հատվածները դիտարկեց Խորենացու ժամանակագրական տվյալների այլ մեկնաբանություններում. տե՛ս Գ. Սարգսյան. Տիգրան Բ-ի Արտավազդ Բ-ի գահատարիների քանակն ըստ Խորենացու, էջ 67-72:

58 Հ. Թ., հ. I, էջ 561:

59 Տե՛ս Հ. Մանանդյան. Տիգրան Երկրորդը և Հռոմը. - Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 433:

60 "Pactique inter se sunt, ut urbes agrisque Mithridati, homines vero et quaecunqae auferri possent, Tigrani cederent". Տե՛ս Justini M. Juniani Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi. Ex recens. Fr. Ruehl, Lipsiae, 1915.

61 „Αφέστηκε δὲ τὰ Μαζακά τῷ μὲν Πόντου περὶ ὀκτακοσίους σταδίους πρὸς ἴσταν... Διέθηκε δὲ φαύλως αὐτοῦς Τιγρᾶνης ὁ Ἀρμένιος, ἠγικα τὴν Καππαδοκίαν κατέδραμεν· ἅπαντας γὰρ ἀναστάτους ἐποίησεν εἰς τὴν Μεσοποταμίαν, καὶ τὰ

ղորդումից նույնպես հետևում է, որ, ժողովրդին տեղահանելով ու նվաճված տարածքը թողնելով, Տիգրանը վերադարձել է Հայաստան:

«Մէջերկրայքի» հիշատակումը լրացնում է Խորենացու հավաստի տեղեկությունը: «Մէջերկրայք» «Աշխարհացուցում» բացատրված է որպես «ի մէջ Յունաց ծովուն եւ Պոնտոսի» (այսինքն՝ Միջերկրական և Աև ծովերի միջև) գտնվող երկրներ: Դրանց շարքում, ի թիվս այլոց, Կապադովկիայի հետ, նշված են «Բիւթանիա, Պափղագոնիա, Գաղատիա»⁶²: Կապադովկիայի գրավումից հետո, մինչև Հռոմի միջամտությունը, մի կարճ ժամանակ Պոնտոսին է հպատակվել նաև Բյութանիան⁶³: Պափղագոնիան և Գաղատիան նույնպես ենթակա էին Միհրդատին⁶⁴: Այս իրադարձությունների մասին Հովսեփոսի երկերում խոսք չկա:

Տիգրանի կողմից Փյունիկիայի Պտղոմայիս քաղաքի պաշարման գրվազը շարադրված է համարվում «Հրեական պատերազմի մասին»-ի տեղեկությունների հիման վրա: Բայց Խորենացու նշած որոշ մանրամասներ հրեա պատմագրի մոտ բացակայում են: Հովսեփոսի տվյալներին համընկնում են «նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ», «Իսկ գշխոյն Հրէից Աղեքսանդրիայ... ինչս բաղումս տալով՝ դարձոյց զնա անտի» հատվածները, որ Պտղոմայիսում պաշարված էր Կլեոպատրան (Ասորիքի թագուհին), և որ Տիգրանն ստիպված էր վերադառնալ Հայաստան՝ Լուկուլլոսի (Խորենացու մոտ՝ Վայկունի) ասպատակության պատճառով: Հովսեփոսից չի վերցված «առեալ գերի բազում և ի հրէից» տեղեկությունը (Տիգրան II-ի կողմից բազմաթիվ հրեաների այս գերեվարությունն ընդունված իրողություն է⁶⁵), Հրեաստանի Ալեքսանդրա-Աալոմե թագուհու «Մեսաղինա» անունը⁶⁶:

Τιγρανόκερτα ἐκ τούτων συνώκισε το πλέον... Տե՛ս The Geography of Strabo. With an English translation by H. L. Jones. Cambridge (Mass.), London, 1960 ff. (Loeb Classical Library).

62 Անանիա Շիրակացու մատենագրությունը (Ա. Գ. Աբրահամյան). Երևան, 1944, էջ 345-346:

63 Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Տիգրան Երկրորդը և Հռոմը, էջ 434:

64 Տե՛ս The Cambridge Ancient History, v. IX, Cambridge, 1932, p. 221 ff. (M. I. Rostovtzeff), նաև՝ ՀԺՊ, Հ. I, էջ 559:

65 Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 254, Գ. Խ. Մ ա Ր գ ս յ ա ն. Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, էջ 35: Կա նաև այլ կարծիք, թե Հայաստանում մեծաքանակ հրեաների գոյությունը, որի մասին, բացի Խորենացուց, վկայում է Փավստոսը (IV, 55), հետևանք է եղել ոչ թե Տիգրանի կազմակերպած գերեվարությունների (քանի որ Հունահռոմեական Հայտնի աղբյուրներն այդ առթիվ հրեաների կոնկրետ հիշատակություն չունեն), այլ Հայաստան գաղթեցված Հելլենիստական բնակչության կրոնափոխության (տե՛ս P. Л. М а н а с е р я н. К вопросу о вероисповедания населения городов Армении (I в. до н. э. – IV в. н. э.). – «Պատմա-բնասիրական Հանդես», 1989, N 2, էջ 198-204): Մեր նպատակից դուրս է այս խնդրի քննարկումը: Այնուամենայնիվ նշենք, որ նման մասսայական կրոնափոխության համար անհրաժեշտ էր Հայաստանում զգալի քանակությամբ բնիկ հրեաների առկայություն, որի պատճառ կարող էր լինել Հենց բռնագաղթը: Եթե Խորենացու տվյալի աղբյուրն Աֆրիկանոսն է, ապա այն պետք է ստույգ համարել:

66 Խալաթյանցն այս առթիվ տարակուսանք է հայտնում, թե՛ Խորենացին Ալեքսանդրային «չգիտես ինչու անվանում է նաև Մեսաղինա» (Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, с. 62), բայց պատմիչն այս անունն իրենից չի հորինել: Եվսերիոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ նշված է. «Աղեքսանդրա որ և Մեսաղինա» (նշվ. Հրատ., Մասն Ա, էջ 193):

Հետաքրքիր է խորենացու Հաղորդած այն մանրամասը, թե Տիգրանը «գրիմէ յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պտղոմայիդ Կղեոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ Հայր իւր յանցանաց»։ Խոսքը Պտղոմեոս VIII Ֆիսկոնի (մ. թ. ա. 145-116) և Կլեոպատրա III-ի դստեր՝ Ասորիքի թագուհի Կլեոպատրա-Սելենեի ու նրա որդի Պտղոմեոս Դիոնիսոսի մասին է։ Թե հանձին «Դիոնիսի որդւոյ նորա» ում ի նկատի ունի խորենացին, պարզվում է 21-րդ գլխից, որտեղ եգիպտոսի թագուհի Հուլիանայի Կլեոպատրա VII-ի (մ. թ. ա. 51-30) մասին նա գրում է. «Այս Կղեոպատրայ դուստր էր Պտղոմէոս Դիոնիսի, թոռն Պաղոմայիդ Կղեոպատրեայ»։ Դուտչմիգը, ապա նաև Խալաթյանցը Հերքել են այս տեղեկությունը ևս, քանի որ, ըստ նրանց, Կլեոպատրա Աելենեն Անտիոքոս Դիոնիսոսի մայրն էր, այլ ոչ Կլեոպատրա VII-ի Հոր⁶⁷։ Եգիպտոսի նշանավոր թագուհու Հայրն առավել Հայտնի է Պտղոմեոս XII Ավլետես (Սրնգա-Հար) անունով, բայց նա ունեցել է նաև «Նոր Դիոնիսոս» կամ պարզապես «Դիոնիսոս» մականունը. նրա լրիվ անունն է՝ Պտղոմեոս XII Թեոս Ֆիլոպատր Ֆիլադելֆոս Նեոս (Նոր) Դիոնիսոս Ավլետես⁶⁸ (մ. թ. ա. 80-58, 55-51)։ Եվսերիոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ նրա անունը հիշատակվում է հետևյալ տարբերակներով. «Պտղոմէոս, որ Նորն Դիոնիսոսն անուանէր», «Պտղոմէոս, որ կոչեցաւ Նոր Դիոնիսոս» կամ պարզապես՝ «Պտղոմէոս Դիոնիսիոս», «Պտղոմէոս որ և Դիոնիսոս»⁶⁹։ Ուստի, նախ, խորենացին նրա անունը ճիշտ է հիշատակում։ Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե Կլեոպատրա-Սելենեն չի եղել նրա մայրը, ապա պահանջված տվյալները կարող են նաև հակառակը ենթադրել տալ։ Պտղոմեոս Ավլետեսը որդին էր Պտղոմեոս IX Սոտեր II-ի (մ. թ. ա. 88-81), որի կանանցից մեկն էր Կլեոպատրա-Սելենեն, և մեզ հասած անորոշ ու հակասական տեղեկությունները որոշակի հիմք են տալիս եզրակացնելու, որ վերջինս եգիպտոսի հայտնի թագուհու Հոր մայրն էր, և որ Պտղոմեոս Ավլետեսը ծնվել է մ. թ. ա. 116-108 թթ. միջև⁷⁰։ Այսինքն՝ խորենացին տվյալ դեպքում էլ օգտվել է հավաստի աղբյուրից, և ավելին՝ նրա միջոցով հաստատվում է որոշ գիտնականների կարծիքը⁷¹, թե Պտղոմեոս Ավլետեսը Կլեոպատրա-Սելենեի որդին էր։ Հետևաբար, արժանահավատ աղբյուրից վերցված լինելով, ուղադրավ է և կարող է պատմական արժեք ունենալ պատմիչի այն Հաղորդումը, որ Կլեոպատրա VII-ի Հայրը Հանցանք էր գործել Տիգրան II-ի Հոր դեմ (ցավոք, նա չի նշում, թե ինչ Հանցանք)։

Ստույգ է հետևյալ հատվածը. «Դշխոյն... Աղեքսանդրիայ, որ... էր լեալ կին Աղեքսանդրի, որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբոր Յուդայ Մակարեի»։ Պատմական այս դեմքերի անունները ու ազգակցական կապի ճիշտ հիշատակումը կարող է հիմնված լինել ինչպես Հովսեփոսի, այնպես

67 Г. Халатянц. Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, с. 68. Նա համաձայնում է Գուտչմիգի հետ՝ հղելով նրա աշխատությանը։

68 *Sb'u RE*, Bd XXXIII₂ (1959), s. v. Ptolemaios XII, col. 1748-1749.

69 Նշվ. Հրատ., Մասն Ա, էջ 197, 246, 252, Մասն Բ, էջ 248։

70 *Sb'u RE*, Bd XXXIII₂, նույն տեղում։

71 *Sb'u* նույն տեղում։

էլ Եվսեբիոսի տվյալների վրա⁷²: Եվսեբիոսի «Ժամանակագրություն» մեջ, սակայն, այդ անձանց մասին տեղեկություններն ուրիշ համատեքստերում են, իսկ Հովսեպոսի մոտ սփռված են տարրեր հատվածներում, չկա ի մի բերված թվարկում, ինչպես Խորենացու մոտ է: Հավանական է, որ պատմիչն այդ հատվածը նույնությամբ վերցրած լինի Աֆրիկանոսից, այլապես ի՞նչը պիտի ստիպեր տարբեր տեքստերում ցրված տվյալներն ուսումնասիրել և դրանց օգնությամբ Ալեքսանդրա թագուհու ամուսնու ու նրա նախորդների ինքնանպատակ թվարկումն անել: Բացի այդ, Եվսեբիոսը չի նշում, թե ով էր Ալեքսանդրի հայրը, այլ նրանից առաջ պարզապես հիշատակում է հրեաների նախորդ քահանայապետ ու թագավոր Արիստոբուլոսին: Իսկ Խորենացին ստույգ տալիս է նրա հոր անունը՝ Հովհաննես: Վերջինիս մասին պատմում է Հովսեպոսը, բայց սովորաբար նրան կոչում է Հյուրկանոս՝ միայն մեկ անգամ հիշելով նրա մյուս անունը՝ Հովհաննես (B. J., I, 54-55): Որ սույն հատվածը Խորենացին կարող է քաղած լինել Աֆրիկանոսից, երևում է Եվսեբիոսի «Ժամանակագրությունից»: Սիմոնի, Հովնաթեսի (Հովհաննեսի), Ալեքսանդր Յաննեսի և Ալեքսանդրայի գահակալության մասին խոսելիս՝ կեսարացի եպիսկոպոսը նշում է երկու աղբյուր՝ Աֆրիկանոս և Հովսեպոս⁷³:

Հաջորդ գլուխը վերաբերում է Պոմպեյոսի արևելյան նշանավոր արչավանքին: Խորենացին գրում է. «Յայնմ ժամանակի Պոմպեյոս Հռոմայեցւոց զօրավար բազմօք եկեալ հասեալ ի Միջերկրեայա զՍկաւրոս սպարապետ իւր յԱսորիս առաքէ...»: Ապա «անցեալ Սկաւրոսի ի Դամասկոս, և տեսեալ զքաղաքն առեալ ի Մետեղայ և ի Ղուղայ՝ զնոսա հալածեալ անտի, ինքն ի Հրէաստան փութայր հասանել ի վերայ Արիստորուղի, յօղնականութիւն եղբօր նորա երիցու, Հիւրկանու քահանայապետի»: Այս տեղեկությունների աղբյուրը նույնպես համարվում է Հովսեպոսը, բայց ինչպես մեջբերված հատվածը, այնպես էլ գլխի շարունակությունը նրա տվյալներից շեղումներ ունեն: Ըստ Հովսեպոսի՝ Սկավրոսը, Արիստոբուլոսից կաշառք ստանալով, օգնում է նրան (B. J., I, 128), ըստ Խորենացու՝ Հյուրկանոսին: Հարկ չկա, սակայն, հայ պատմադրի հաղորդումը սխալ համարելու, քանի որ հետագայում Սկավրոսը դարձել է Արիստոբուլոսի թշնամին (A. J., XIV, 37-38), և հռոմեացիներն օգնել են Հյուրկանոսին (A. J., XIV, 48-49, B. J., I, 133): Աֆրիկանոսը կարող էր իրադարձությունների ընթացքը ներկայացրած լինել փոքր-ինչ այլ կերպ, որի հետևանքով էլ, ըստ երևույթին, Խորենացին Սկավրոսին դարձրել է Հյուրկանոսի դաշնակից ի սկզբանե:

Հովսեպոսը չի հիշատակում Պոմպեյոսի և Միհրդատ Պոնտացու բանակների միջև տեղի ունեցած ընդհարումներն ու ճակատամարտը, պատմական եղելություն, որի մասին գրում է Խորենացին. «Իսկ Պոմպեյի պատերազմեալ ընդ Միհրդատայ տեսանէ սաստիկ ընդդիմակացութիւն և ահագին մարտս, և վտանգի յոյժ. սակայն բազմութեանն յաղթեալ՝ փախս-

72 Հմմտ. Եվսեբիոսի «Ժամանակագրություն» մեջ. «Շմաւոն հրէից քահանայապետ սպանանի, զոր յաջորդէ Յովհաննէս նորին որդի», «Յուգա՝ որ կոչեցաւ Մակաբէոս... Յետ որոյ Սիմոն (= Շմաւոն - Ա. Թ.) եղբայր նորին», «Յետ որոյ (Արիստոբուլոսի - Ա. Թ.) Աղեքսանդրոս՝ որ և Յաննէոս...»: Տե՛ս նշվ. հրատ., Մասն Ա, էջ 193, Մասն Բ, էջ 244:

73 Նշվ. հրատ., Մասն Ա, էջ 193:

տական լինի Միհրդատի կողմանս Պոնտոսի»: Ընդ որում, ստույգ են այս տեղեկությունների մանրամասները ևս: Իրապես, Միհրդատն սկզբում անսպասելի փոքր հարձակումներով բավական վնաս է հասցրել հռոմեացիներին: Պոմպեյոսի բանակը «վտանգի է ենթարկվել» նաև պարենի պակասի պատճառով: Դիոն Կասիոսը պատմում է, թե նույնիսկ Միհրդատն «ընդունում էր բազմաթիվ դասալիքների» (ἔξαστομολούντας... συχνοῦς ἐδέχετο), որ փախչում էին հռոմեական բանակից (XXXVI, 47, 2⁷⁴): Սակայն ի վերջո թվով թշնամուն զգալիորեն գերազանցող հռոմեացիների «բազմութունը»⁷⁵ Փոքր Հայքում տեղի ունեցած վճռական ճակատամարտում հաղթել է, և Միհրդատն իր բանակի մնացորդներով փախել է դեպի Հյուսիս, «ի կողմանս Պոնտոսի» (այսինքն՝ Սև ծովի. Հմմտ. I, 8, II, 8 և այլուր. «ի ծովէն Պոնտոսի», «Պոնտոս ծովու» և այլն)⁷⁶: Ապպիանոսը գրում է, որ Միհրդատը որոշել էր պտտվել «ողջ Պոնտոսի շուրջը» (τὸν Πόντον ὅλον ἐν κυκλω) (Mithr., 101⁷⁷):

Ապա Պոմպեյոսն, ըստ Խորենացու, Միհրդատից անսպասելիորեն ազատվելով, գրավում է Մազական, այնտեղ զորք թողնում ու հեռանում («Յորմէ իբրև զերծեալ Պոմպէոս, որում ակն ոչ ունէր, և առեալ զՄաժաք... նստուցանէ զօր ի քաղաքին. ինքն... ընդ Ասորիս փութայ Հասանել»: 66 թվականի սկզբներին Տիրարանը, վերանվաճելով իր կորցրած որոշ տարածքներ, հասել էր Կապադոկիա: Սակայն որդու ապստամբության պատճառով նա ստիպված էր ընդհատել իր արշավանքն ու վերադառնալ Հայաստան: Պոմպեյոսը Կապադոկիան վերստին միացրեց Հռոմեական կայսրությանը և, այնտեղ (նաև Կիլիկիայում) թողնելով երեք լեգեոն, շարունակեց իր առաջխաղացումը⁷⁸:

Գլխի վերջը բովանդակում է տեղեկություններ, որոնց հավաստիությունը չի հաստատվում ուրիշ աղբյուրներով (օրինակ՝ Պիդատոսի հոր ձեռքով Միհրդատի թունավորման մասին): Բայց Խորենացին այստեղ հիշատակում է Միհրդատի մի որդուն՝ Միհրդատին («Պոմպէոս... կալեալ զորդի նորա զՄիհրդատ»): 18-րդ գլխից երևում է, որ սա Միհրդատ Պերգամոնի է⁷⁹. նա մ. թ. ա. 48 թ. Կեսարի գաշնակիցն էր եգիպտացիների դեմ պատերազմում և իր խիզախության համար նրանից ստացավ Իոսպորի թագավորությունը⁸⁰: Հովսեպոսը չի նշում (B. J., I, 187-192), թե ով էր

74 Dio's Roman History. With an English translation by E. Cary. Cambridge (Mass.), London, 1969 ff. (Loeb Classical Library).

75 Մոմպեյոսն աղբյուրների անուղղակի տեղեկությունների հիման վրա Համոզիչ հաշվարկով եզրակացրել է, թե Պոմպեյոսի բանակը բաղկացած էր 40-50 հազար զինվորից, չհաշված դաշնակիցներին (տե՛ս Т. М о м м з е н. История Рима. Т. III, М., 1941, с. 103): Միհրդատի գործի թիվը կոնկրետ նշում են Պրուտարքոսը (Ротм., XXXII) և Ապպիանոսը (Mithr., 97). 30 հազար հետևակային և 2-3 հազար հեծյալ:

76 Տե՛ս Т. М о м м з е н. Ук. соч., с. 105-106, 2. Մ ա ն ա ն դ յ ա ն. Տիգրան Երկրորդը և Հռոմը, էջ 564-566, 573-574:

77 Appian's Roman History. With an English translation by Horace White. Cambridge (Mass.), London, 1962 ff. (Loeb Classical Library).

78 Տե՛ս 2. Մ ա ն ա ն դ յ ա ն. Տիգրան Երկրորդը և Հռոմը, էջ 562-563:

79 «Միհրդատայ արհամարհութիւն կրեալ ի... Տիրանայ... անկանի առ Կեսար, իշխանութիւն գտեալ ի նմանէ զՊերգեայ քաղաքի...»:

80 Տե՛ս RE, Bd XV₂ (1932), s. v. Mithridates (15), col. 2205-2206.

նրա հայրը, մինչդեռ Միհրդատ Պերգամցին իրոք իրեն համարում էր Միհրդատ եվպատորի ապօրինի որդին⁸¹:

Հաջորդ երեք կարճ գլուխներում (16-18) խորենացին օգտվել է Հովսեպոսի տվյալներից՝ նրա հիշատակած պարթևների դործունեությունը վերադրելով հայերին ու Տիգրան II-ին: Պատմիչի մոտ այս շփոթությունն պատճառներն ու հիմքերը կփորձենք ցույց տալ այլ առիթով⁸²: Հիմնականում Հովսեպոսի տեղեկություններից օգտված լինելով հանդերձ՝ խորենացին ունի մանրամասներ (մասնավորապես «Միհրդատի որդի Միհրդատին» վերաբերող), որոնց աղբյուրն այլ է: Այդ մանրամասները հազիվ թե ստույգ լինեն. դրանք ավելի շուտ դարձյալ շփոթության արդյունք են, սակայն մի աղբյուր խորենացուն հիմք է ծառայել և ոչ ճիշտ մեկնաբանության հետևանքով հանգեցրել թյուրիմացության: Համենայն դեպս պատմագրին հայտնի է, որ, ի վերջո Լուկուլլոսի բանակին դիմագրավելով, Տիգրանն այնուհետև դիմել է հակահարձակման: Նա, իհարկե, այդ մասին պատմում է յուրովի. Տիգրանը «գյեղուզական բնաջինջ արարեալ ի լեռնէն... խաղայ գնայ յԱսորիս ի վերայ զօրացն Հռոմայեցւոց») (16): Պատմիչը գիտե նաև, որ Մագակա քաղաքը վերանվանվել է Կեսարիա:

Հաջորդ՝ 19-րդ գլուխը կարևոր է և՛ խորենացու աղբյուրների ու դրանց օգտագործման նրա մեթոդների ուսումնասիրության համար, և՛ բովանդակած տեղեկություններով (օրինակ՝ թե ինչու և ինչ հիման վրա է խորենացին պարթևների արշավանքը վերադրում «հայոց և պարսից» բանակին. ի դեպ, հայերի մասնակցությունն այս գործողություններին միանգամայն հավանական է համարվում⁸³, և եթե խորենացու համար հիմք են եղել նաև Աֆրիկանոսի տվյալները, ուրեմն նրա տեղեկությունն առավել ևս ստույգ է), ուստի արժանացել է մասնագետների ուշադրությանը: Համառոտ ներկայացնենք այդ գլխի որոշ դրվագների բովանդակությունը:

Հայոց և պարսից միացյալ բանակն ուղարկվում է Ասորիք ու Պաղեստին՝ այնտեղի բնակիչներին հաշտեցնելու: Սսլարապետ Բարզափրան Ռշտունուն ընդառաջ է դալիս ոմն «Պակարոս» և խոստանում հինգ հարյուր գեղեցիկ կին ու հազար քանքար ոսկի, եթե նա օգնի Հրեաստանում Հյուրկանոս թագավորին իշխանությունից զրկելու և Անտիգոնոսին թագավորեցնելու: Բարզափրանը համաձայնում է և իր զորքն առաջնորդում Հյուրկանոսի ու նրա զինակից Փասայելի՝ Հերովդեսի եղբոր դեմ: Մի առանձին հեծելազուևը հայոց թագավորի տակառասլետի գլխավորությամբ առաքվում է Երուսաղեմ: Տակառասլետը Հյուրկանոսին համոզում է գնալ

81 Տե՛ս T. M o m m z e n. ՄԿ. ԵՊ., Ե. 362.

82 Այստեղ նշենք միայն, որ այդպիսի շփոթության տեղիք է տալիս հենց Հովսեպոսը. «Հրեական պատերազմի մասին»-ում գրված է, որ Անտոնիոսն արշավեց «պարթևների դեմ» (խոսքը վերաբերում է հռոմեացի զորավարի՝ դեպի Հայաստան ձեռնարկած արշավանքին, որի արդյունքում գերվեց Արտավազդ II-ը), ապա, Պարթևստանից (էԿ Παρθων) վերադառնալով, Անտոնիոսը Կլեոպատրային նվիրեց «պարթև» (ὁ Παρθος) Արտավազդ թագավորին (I, 362-363): Առհասարակ խորենացին Հայաստանի թագավորներին մինչև Տիգրան I-ը ներառյալ համարում է բնիկ (տե՛ս I, 22), իսկ Վաղարշակից սկսած, մինչև Արշակունիների հարստության վերացումը՝ ծագմամբ «պարթև»:

83 ՀժՊ. Կ. I, էջ 613-614:

Բարգափրանի մոտ բանակցությունները: Սպարապետի երդմանը հավատարմով Հյուսիսային Հերովդեսին թողնում է Երուսաղեմում և Փասսյելի ուղեկցությամբ գնում ծովափնյա «Եքտիպոն» (= Έκδιππων) գյուղը: Բարգափրանը հրամայում է հանձնել նրանց Անտիոնոսի ձեռքը: Վերջինս ատամներով պոկում է Հյուսիսային ականջները, որպեսզի նա այլևս չկարողանա քահանայապետ լինել (ըստ հրեական օրենքի՝ քահանան պետք է ողջանդամ լինել)⁸⁴:

Նույն դեպքերի մասին, որոշ տարբերություններով և հայերի մասնակցությունն ամենևին չհիշատակելով (հայ-պարսկական զորքերի փոխարեն նրա մոտ Ասորիք են արշավում պարթևները), պատմում է Հովսեփոսը, և Խորենացին, անկասկած, աչքի առաջ ունեցել է նրա տեղեկությունները: Այս դեպքերի համար նույնպես ուսումնասիրողները որպես պատմիչի միակ աղբյուր նշում են Հովսեփոսին, սակայն պատկերը մեզ փոքր-ինչ այլ կերպ է ներկայանում:

Հետաքրքրական է, որ Սիրնեյլուսը հակիրճ պահպանել է Աֆրիկանոսի՝ այս և հետագա իրադարձություններին վերաբերող տվյալները հետևյալ վերնագրով. „Αφρικανού περί των Ἰρκανῶ καὶ Ἀντιγόνου συμβαντων καὶ περί Ἡρωδου τοῦ τε Σεβαστοῦ καὶ Ἀντωνίου καὶ Κλεοπάτρας ἐν ἐπιτομῶ„ («Աֆրիկանոսի [տեղեկությունները] Հյուսիսային և Անտիոնոսի հակամարտության և Հերովդեսի, Սեբաստոսի, Անտոնիոսի ու Կլեոպատրայի մասին՝ համառոտ»)՝ խորենացու շարադրանքում նկատելի են այս հատվածի որոշ հետքեր. 1) Ըստ Հովսեփոսի՝ նվաճողներին գլխավորում են պարթևների սատրապ Բարգափրանեսը և արքայորդի Պակորոսը (Բակուրը) (B. J., I, 248): Անտիոնոսին թագավորեցնելու համար Կոյլե-Սիրիայի թագավոր Լիսանիսը սատրապ Բարգափրանեսին խոստանում է հազար տաղանդ և հինգ հարյուր կին: Խորենացու մոտ որպես կաշառքն առաջարկող միջնորդ հանդես է գալիս «ոմն Պակարոս», որ համապատասխանում է Հովսեփոսի հիշատակած Պակորոս արքայորդուն: Ի՞նչ հիմք ունեն Խորենացին միջնորդին «Պակարոս» անվանելու: Իմենք Աֆրիկանոսի տեղեկություններին. „Ἀντιγονος δὲ προσφύγων... τῶ τῶν Πάρθων βασιλεῖ δια Πακόρου τοῦ υἱοῦ κατήλαθεν, ἐπι χρυσοῦ ταλάντοις χιλίοις„ («Իսկ Անտիոնոսը, փախչելով, Պակորոս [արքայ] որդու միջնոր-

84 «...Առեալ Տիգրանայ գԲարգափրան նահապետ Ռըշտունեաց նախարարութեանն սպարապետ կացուցանէ զօրացն Հայոց ե Պարսից և առաքէ ի վերայ զօրացն Հռոմայեցուց, հրաման տուեալ զբնակիչս աշխարհին Ասորուց և Պաղեստինացուց ի հաշտութիւն հաւանութեան խօսել: Նմա ընդ առաջ լինի ոմն Պակարոս անուն... Եւ եկեալ առ Բարգափրան... խոստանայ հինգ հարիւր կին գեղեցիկ և հազար քանքար ոսկոյ, զի օգնեացէ նոցա ընկնելով ի թաղաւորութենէ Հրէից զՀիւրկանոս, և թաղաւորեցուցանել զԱնտիոնոս: Իրրե ետես Հիւրկանոս... և Փասսյեզոս եղբայր Հերովդի, եթէ... ընդ երկիրն անցանէր Բարգափրան խօսին և ինքեանք զխաղաղութիւն առ Բարգափրան: Եւ նա գԳնէլ ոմն, որ էր տակառապետ արքային Հայոց, առաքէ յԵրուսաղէմ հանդերձ հեծելագորու... Եւ տակառապետին գաւով խրատ տուեալ Հիւրկանու զի առ Բարգափրան երթիցէ... Եւ Հիւրկանու երդումն խնդրեալ ի Բարգափրանայ երդնու... Ընգ որ վստահացեալ Հիւրկանոս թողու զՀերովդէս ի վերայ Երուսաղեմի, և զՓասսյելոս զերէց եղբայր Հերովդի առեալ ընդ իւր գայ առ Բարգափրան ի ծովեզրն, ի դեօղն որ կոչի Եքտիպոն: Եւ Բարգափրան... հրաման տայր ի բուռն առնուլ զնոսա և ի ձեռն Անտիոնոսի մատնել: Եւ Անտիոնոս ի վերայ Հիւրկանու անկեալ զականջս նորա ատամամբքն ի բաց կտրէր. զի... անհնար լիցի նմա զքահանայապետութիւնն ունել»:

85 Տե՛ս PG, t. 10, col. 83–88.

դուրժամբ եկավ պարթևների թագավորի մոտ՝ Հազար տաղանդ ոսկիրով»): Այսինքն, ըստ Աֆրիկանոսի, կաշառքն առաջարկվում է անձամբ պարթևների թագավորին, և միջնորդի անունը, ինչպես Հայ պատմագրի մոտ, «Պակորոս» է: Սա Աֆրիկանոսի և Խորենացու տեղեկությունների միջև ցայտմ չնկատված հետաքրքիր զուգահեռ է: 2) Հովսեպոսի մոտ պարթևները նվաճում են Ասորիքը. Պաղեստինի մասին համապատասխան հատվածներում խոսք չկա: Իսկ Խորենացու հաղորդմամբ՝ Բարզափրանը Հայ-պարսկական զորքն առաջնորդում է դեպի «Ասորոց և Պաղեստինացոց» աշխարհը: Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից» Մինկելլոսի մեջբերումներում նույնպես դեպքերը ծավալվում են ..*ἐν Παλαιστίνῃ καὶ Συρίᾳ*, («Պաղեստինում և Ասորիքում»): 3) Մեր ուշադրությունը գրավեց Խորենացու մոտ «Հազար տաղանդ ոսկու» («խոստանայ Հազար քանքար ոսկու») հիշատակումը. բառացի փոխառություն Աֆրիկանոսից (*„χρυσὸν τάλαντοις χιλιοις“*), այլ ոչ թե Հովսեպոսից, քանի որ վերջինս նշում է միայն «Հազար տաղանդ» (*„χιλία τάλαντα“*). չկա «ոսկի» բառը, մինչդեռ Խորենացու մոտ այն ոչ միայն կա, այլև գործածված է նույնությամբ, սեռական հոլովով (*„χρυσὸν“*, - «ոսկու»): 4) Ժամանակին Ա. Բառնդարտները բանասերների ուշադրությունը հրավիրել է Հյուսիսային ականջները կտրելու հատվածի վրա⁸⁶: Անտիգոնոսն, ըստ Խորենացու, «զականջս նորա [Հյուսիսային] ատամբքն ի բաց կտրէր»: Հիմնվելով Գելցերի ուսումնասիրության վրա⁸⁷ Բառնդարտները նշում է, որ Խորենացու այս արտահայտությունը Մինկելլոսի մոտ հանդիպող *„τοῖς ὀδοῦσιν ἀποτεμῶν αὐτοῦ τὰ ὠτα“*, բառերի ճշգրիտ կրկնությունն է, մինչդեռ Հովսեպոսը «Հրեական հնախոսություն»-ում գրում է. *„ἀποτεμνεὶ αὐτοῦ τὰ ὠτα“*, («ի բաց» է կտրում նրա ականջները) (A. J., XIV, 366), իսկ «Հրեական պատերազմի մասին»-ում՝ *„τὰ ὠτα λαβᾶται τοῖς ὀδοῦσιν“*, («ականջները խեղում է ատամներով») (B. J., I, 270): Ինչպես նշել ենք, ապացուցված է, որ «Հրեական հնախոսությունը» Խորենացու աղբյուրը չի եղել. նա օգտվել է Հովսեպոսի միայն «Հրեական պատերազմի մասին» երկից: Հաշվի առնելով նաև այս հանգամանքը՝ պետք է ընդունենք, որ Խորենացին առնվազն «ի բաց կտրել» արտահայտությունը նույնությամբ վերցրել է Աֆրիկանոսից (հունարեն ընագրից կամ հայերեն որևէ թարգմանությունից). համեմատենք պահանջված վերոհիշյալ հատվածում. *„ἀποτεμῶν αὐτοῦ τὰ ὠτα“*, («ի բաց» կտրելով նրա ականջները): Իսկ իր՝ Մինկելլոսի համապատասխան տողերը, որոնցում Խորենացու արտահայտության ճշգրիտ զուգահեռն է, ինչպես երևում է, գրված են Աֆրիկանոսի տվյալների հիման վրա, քանի որ բառացի նմանություն ունեն նրա «Ժամանակագրությունից» նշված մեջբերումների հետ: Համեմատենք. Աֆրիկանոս. *„Φασάιλος δὲ... ἀναιρεῖται· Ὑρκανὸς δὲ Ἀντιγόνῳ παρεδόθη ζῶν. Ὁ δὲ Παρθοῖς ἔδοκεν ἀγειν, ἀποτεμῶν αὐτοῦ τὰ ὠτα. ὡς μηκέτι ἱερῶτα“*, - Մինկելլոս. *„[Ἀντιγόνος] κρατεῖ... ζῶντα τὸν Ὑρκανὸν χεροσάμενος καὶ τοῖς*

86 A. Baumgartner. Op. cit., S. 510.

87 H. Gelzer. Op. cit., S. 264–265.

οδοῦσιν ἀποτεμῶν αὐτοῦ τα ὠτα. ὡς ἂν μὴ τὸ λοιπὸν ἱερατεῦοι, καὶ Πάτριος ἐκδίδωσιν ἄγειν... Ἀναίρει δὲ Φασαηλον...»,⁸⁸:

Խորենացին որոշ դեպքերում չի հետևում Հովսեպոսի տեղեկութ-
յուններին և իրադարձություններն այլ կերպ է ներկայացնում: Օրինակ,
ըստ Խորենացու, Հյուրկանոսը և Փասայելոսը Բարզափրանի հետ բանակ-
ցում են նաև նախապես, երբ նա, իրենց երկիրը ներխուժելով, խաղաղութ-
յամբ շարունակում էր իր առաջխաղացումը: Իսկ ըստ Հովսեպոսի՝ բանակ-
ցությունները տեղի են ունենում միայն այն բանից հետո, երբ տակառա-
պետը մտնում է Երուսաղեմ և նրանց համոզում գնալ Բարզափրանի մոտ:
Համաձայն Հովսեպոսի (B. J., I, 255)՝ տակառապետը Փասայելոսին է
դրդում գնալ բանակցությունների, և նա համոզվում ու գնում է՝ իր հետ
որպես ուղեկից տանելով Հյուրկանոսին: Իսկ Խորենացու մոտ Հյուրկա-
նոսն է բանակցությունների գնացող գլխավոր անձը, և Փասայելոսն ու-
ղեկիցի դերում է: Հովսեպոսը պատմում է (B. J., I, 268), թե պարթևները Ե-
րուսաղեմում կողոպուտ են անում՝ ձեռք չտալով միայն Հյուրկանոսի
դրամին, որ երեք հարյուր տաղանդից ավելի չէր: Մինչդեռ, ըստ Խորենա-
ցու, նախ, Հյուրկանոսի ինչքը «աւելի քան զերեքարիւր քանքար» էր, բա-
ցի այդ՝ Երուսաղեմ ներխուժածները կողոպտում են հենց նրա ունեցվածքը
և ուրիշ ոչ ոքի չեն վնասում: Այս կարգի տարբերությունները նույնպես
եզրակացնել են տալիս, որ պատմիչը, Հովսեպոսից գատ, ըստ երևույթին
օգտվել է նաև Աֆրիկանոսի պատմածից: Ցավոք, դիտարկվող գլխի մեծ
մասը հնարավոր չէ համեմատել Աֆրիկանոսի տեղեկությունների հետ,
քանի որ Մինկելլոսի մեջբերումները խիստ համառոտված են:

20-րդ դարի Խորենացին սկսում է այսպես. «Հերովդէս անցեալ ի
Հռովմ՝ առաջի Անտոնիոսի և Կեսարու և սինկլիտոսին զինքեան
միամտութիւն ան Հռոմայեցիսն պատմէ, և թագաւոր Հրեաստանի
յԱնտոնիոսէ եղեալ...»: Այս հատվածը հակիրճ ու կոնկրետ գրելաձևով
նման է Աֆրիկանոսի շարադրանքին. «, Ἄντωνιος δὲ Ἡρωδην μὲν καὶ
αὐτὸς ἀνηγόρευσε βασιλεα...» («Ինքը՝ Անտոնիոսն էլ Հերովդեսին թա-
գավոր հայտարարեց»), «... Ἡρωδης ὑπὸ τῆς συγκλήτου καὶ Ὀκταουῖου
τοῦ Σεβαστοῦ βασιλευς Ἰουδαίων ἀνηγορευθην», («Հերովդեսը սինկլիտո-
սի և Օկտավիանոս Աերաստոսի (նույնն է՝ «Կեսարի» – Ա. Թ.) կողմից
հրեաների թագավոր հայտարարվեց»)⁸⁹: Ընդ որում, Աֆրիկանոսն այստեղ
հռոմեական սենատը կոչում է նույն բառով՝ «սինկլիտոս» (σύγκλητος),
ինչպես որ Խորենացու մոտ է: Վերջինս հունարեն այդ բառը վերցրել է իր
աղբյուրից, որ, ինչպես ենթադրվում է, Հովսեպոսն է⁹⁰: «Հրեական պատե-
րագմի մասին»-ում այս իրադարձությունը ներկայացված է հանգամանո-
րեն, նկարագրական եղանակով, և դժվար է Խորենացու խոսքերի հետ բա-
ռացի զուգահեռներ գտնել: Առանձնացնենք համապատասխան հատված-
ները (B. J., I, 281-285). «[Հերովդեսը] հսկայական մի տրիբերես պատրաս-
տեց, որով իր ընկերների հետ նավարկեց Բրունդիզիում և, այնտեղից շտա-

88 GS, p. 579.

89 PG, t. 10, col. 85-86.

90 Այդպես է կարծում, օրինակ Ստ. Մալխասյանը. տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո ռ ե -
ն ա ց ի, էջ 293, ծան. 150:

պելով Հռոմ, նախ դիմեց Անտոնինոսին՝ հաշվի առնելով իր հոր ու նրա ընկերակցությունը. և պատմեց իր ու իր ընտանիքի հետ պատահած դժբախտությունների մասին... Անտոնինոսը... կարեկցանքով լցվեց և, հիշելով Անտիպատրոսի հյուրընկալությունը, բոլոր (առավելությունների) հետ հաշվի առնելով նաև իր դիմացիների առաքինությունը, դեռ այդ ժամանակ որոշեց հրեաների թագավոր դարձնել նրան, ում մինչ այդ ինքն էր տետրարքես նշանակել... Իսկ Կեսարը նրանից էլ պատրաստակամ գտնվեց՝ մտաբերելով Անտիպատրոսի արշավանքը... Նա սենատի նիստ գումարեց, որտեղ Մեսսալան և նրանից հետո Ատրատինոսը, ներկայացնելով Հերովդեսին, խոսեցին նրա հոր բարի գործերի և հռոմեացիների հանդեպ նրա (Հերովդեսի – Ա. Թ.) բարեհաճության մասին... Երբ Անտոնինոսն առաջ գալով ասաց, թե պարթևների հետ պատերազմի համար էլ Հերովդեսի թագավորելը նպաստավոր է, բոլորը [կողմ] քվեարկեցին: Սենատի ցրվելուց հետո Անտոնինոսն ու Կեսարը, նրանց մեջտեղում Հերովդեսը, դուրս եկան... Հերովդեսի թագավորելու առաջին օրն Անտոնինոսը հյուրասիրեց նրան»⁹¹:

Այս ընդարձակ մեջբերումները մեզ անհրաժեշտ էին՝ ցույց տալու համար Խորենացու կարճ հիշատակման համեմատ դրանց ոճական տարրերությունը, նաև տեքստային նմանությունների բացակայությունը, ասենք՝ հետևյալ տիպի. Խորենացի. «Հերովդես... թագաւոր Հրեաստանի յԱնտոնիոսէ եղեալ» - Աֆրիկանոս. «Ինքը՝ Անտոնինոսն էլ Հերովդեսին թագավոր հայտարարեց»: Հետաքրքիր է, որ Հովսեպոսն այս հատվածներում չի գործածում «սինկլիտոս» բառը, այլ՝ βουλή :

Հետագա դեպքերի հաջորդականությունը և որոշ հանգամանքներ, Հովսեպոսի տվյալների համեմատ, Խորենացու մոտ այնպես են խախտված կամ փոխված, որ այս դեպքում էլ դժվար է հրեա պատմագրին նրա միակ աղբյուրը համարելը: Համեմատենք. Խորենացի. «Հասեալ յԱսորիս [Բենդիդիոս] փախստական առնէ զգօրս Հայոց, և զՍիղոն թողեալ ընդդիմակաց Հայոց մերձ ի յՖիրատ, և ղՊակարոս սպանեալ՝ դառնալ յԵրուսաղէմ ի վերայ Անտիդոնի» - Հովսեպոս. 1) Բենտիդիոսը ոչ թե հասնում է Ասորիք, այլ ուղարկվել էր այնտեղից (πεμφθεις εκ Συρίας) պարթևների առաջխաղացմանը խոչընդոտելու (B. J., I, 288): 2) Նա, հեռանալով, Սիլոնին թողնում է ոչ թե «մերձ ի յՖիրատ», այլ Երուսաղեմի մոտ, և ոչ թե որպեսզի նա հայերին (Հովսեպոսի մոտ համապատասխանաբար պետք է լինել «պարթևներին») դիմագրի, այլ՝ որ այդպես քողարկվի Անտիդոնոսից

91 «...[Իրոնիս] ναυπηγείται τρίτην μεγίστην, ἐν ἣ μετὰ τῶν φίλων εἰς Βρεντέσιον καταπλεύσας, κάκειθεν εἰς Ῥώμην ἐπειχθείς, πρῶτῳ δια τὴν πατρίαν φίλιαν ἐνετύγχανεν Ἀντωνίῳ, καὶ τὰς τε αὐτοῦ καὶ τοῦ γένους συμφορὰς ἐκδιηγείτω... Ἀντωνίου δὲ ἤπειτα... οἶκτος, καὶ κατα μνήμην μὲν τῆς Ἀντιπατροῦ ξενίας, το δὲ ὄλον καὶ δια τὴν τοῦ παρόντος ἀρετὴν, ἔγω καὶ τότε βασιλέα καθιστᾶν Ἰουδαίων ὃν πρότερον αὐτὸς ἐποίησεν τετράρχην... Καῖσαρ μὲν οὖν εἶχεν ἐτοιμότερον αὐτοῦ τας Ἀντιπάτροῦ στρατείας ἀνανεοῦμενος... Συνήγαγεν δὲ τὴν βουλήν, ἐν ἣ Μεσσάλας καὶ μετ' αὐτὸν Ἀτρατῖνος παραστησάμενοι τὸν Ἡρώδη τὰς τε πατρίδας εὐεργεσίας καὶ τὴν αὐτοῦ πρὸς Ῥωμαίους εὐνοίαν διεξήεσαν... Ὡς παρελθὼν Ἀντωνίος καὶ πρὸς τὸν κατα Πάρθων πόλεμον βασιλεύειν Ἡρώδην συμφέρειν ἔλεγε, ἐπισηφίζονται πάντες. λυθείσης δὲ τῆς βουλῆς Ἀντωνίος μὲν καὶ Καῖσαρ μέσον ἔχοντες Ἡρώδη ἐξήεσαν... Τὴν δὲ πρῶτην Ἡρώδη τῆς βασιλείας ἡμέραν Ἀντωνίος εἰστία [αὐτὸν],»

իր կաշառվածութիւնը (B. J., I, 289): 3) Ոչ թե Բենտիդիոսն է սպանում Պակորոսին, այլ նա ընկնում է հռոմեացիների դեմ ճակատամարտում (A. J., XIX, 434): «Հրեական պատերազմի մասին»-ում Հովսեպոսն առհասարակ չի նշում, թե ինչպես և ում ձեռքով զոհվեց Պակորոսը, այլ պարզապես պատմում է Բենտիդիոսի հետագա գործողութիւնների մասին՝ «պարթևների վտարվելուց, Պակորոսի սպանվելուց [հետո]» (Παρθων μεν ἐξελθλαμένων, ἀνηρημένου δὲ Πακόρου) (B. J., I, 317): Խորենացու տարբերակը՝ «[Բենտիդիոս]... զՊակարոս սպանեալ», համընկնում է Ստրաբոնի տեղեկութեան հետ (XVI, 2, 8. «այս տեղերի մոտ Բենտիդիոսը սպանեց Պակորոսին» (περὶ οὗς τόπους ὑπὸ Οὐεντιδίου Πακόρος διεφθάρη). բառացի՝ «Բենտիդիոսի կողմից Պակորոսն սպանվեց»), հետևաբար վերցված է ստույգ աղբյուրից: 4) Պակորոսն սպանվում է ոչ թե Բենտիդիոսի՝ Երուսաղեմ, Անտիգոնոսի դեմ գնալուց առաջ, այլ հետո (ավելին. Հովսեպոսի մոտ ինքը՝ Բենտիդիոսն առհասարակ չի ճակատամարտում Անտիգոնոսի դեմ, այլ, նրանից կաշառք վերցնելով, հեռանում է Երուսաղեմից և այնուհետև Հերովդեսին օգնութեան ուղարկում իր զորավարներին) (B. J., I, 288-289, 317):

21-րդ գլխում Խորենացին Հովսեպոսից (B. J., I, 327) է վերցրել հետեյալ տեղեկութիւնը. Անտոնիոսը, Շամշատ (Սամոսատ) քաղաքը գրավելով, Հերովդեսին որպես օգնական թողնում է Սոսսիոսին, Անտիգոնոսի գեմ կռվելու, և ինքը գնում Եգիպտոս: Բայց անմիջապես հետո նա, միանգամայն ստույգ, նշում է Անտոնիոսի՝ Եգիպտոս գնալու պատճառը (Հովսեպոսն այդ մասին ոչինչ չի ասում). «Փութայր հասանել ըստ շամրշութեան առն կնամոյոյ, ցանկութեամբ վառեալ ի Կղէոպատրայ գշխոյն Եգիպտացոց»: Այնուհետև Խորենացին հիշատակում է Կլեոպատրայի հոր և տատի անունները (այդ մասին խոսել ենք վերևում): Հովսեպոսը, Անտիգոնոսի մահապատժի մասին պատմելիս, օգտագործում է πέλεκος εκδόχομαι (բառացի՝ «կացին ընդունել») արտահայտութիւնը (B. J., I, 357): Խորենացին Անտիգոնոսի վախճանը չի հիշատակում որպես մահապատիժ, այլ պարզապես գրում է, որ Աոսսիոսը, «սպանեալ զԱնտիգոնոս», թագավորեցնում է Հերովդեսին (հմտ. Ա.Ֆրիկանոս. «Անտոնիոսը... սպանեց հրեաների թագավոր Անտիգոնոսին» - „ Ἄντωνιος... Ἀντιγονοῦ τὸν Ἰουδαίων ἀπεκτείνε βασιλέα,»⁹²):

Մեզ հետաքրքրող վերջին երկու գլուխները (22 և 23) վերաբերում են Տիգրան II-ի որդի Արտավազդ II-ին: Նախ նշենք, որ, հակառակ ընդունված կարծիքի, գրանցից առաջինը չունի որևէ զուգահեռ Հովսեպոսի պատմածի հետ: Գլխի սկզբում Խորենացին հիշատակում է Հայաստանի ներքին կյանքում Արտավազդի կատարած ինչ-որ փոփոխութիւններ, որոնց մասին ուրիշ աղբյուրից հայտնի չէ. գրանք պատմիչին հասել են Հայկական միջավայրից: Մեր խնդրո առարկան է գլխի շարունակութիւնը՝ Արտավազդի խիստ րացասական ընդհարումը և Միջագետքին տիրանալու համար նրա ու Անտոնիոսի միջև ծավալված պատերազմական գործողութիւնների դրվագները:

92 PG, t. 10, col. 85-86.

Ինչ վերաբերում է Արտավազդ II-ի կերպարի մասին Խորենացու պատկերացմանը, ապա մասնադետալները բազմիցս նշել են, որ այն չի համապատասխանում պատմական իրականությանը: Իհարկե, ակնհայտ է այս թագավորի հանդեպ պատմագրի վերաբերմունքի միտումնավորությունը, որի հետևանքով Արտավազդ II-ին վերագրված են ծայրահեղ բացասական հատկանիշներ: Սակայն ուշագրություն արժանի է հետևյալ հանդամանքը. Արտավազդ II-ի անվանարկումը հունա-հռոմեական աղբյուրներում սովորական երևույթ էր⁹³, քանի որ Անտոնինոսը 36 թ. իր արևելյան արշավանքի անհաջող վախճանի համար նրան էր մեղադրում: Հետևաբար, եթե Հնարավոր համարենք, որ Խորենացին, տեղական ավանդությունների հետ մեկտեղ, Արտավազդ II-ի մասին տեղեկություններ է վերցրել նաև Աֆրիկանոսից (Հովսեփոսի երկերում նրա անհատական հատկանիշների մասին որևէ խոսք չկա), ապա Տիգրան II-ի հաջորդի բացասական բնութագրի չպետք է արտառոտ թվա:

Օրինակ՝ Խորենացին գրում է, որ Արտավազդն «անձնատուր էր եղել կերուխումի» («ուտելեաց և ըմպելեաց պարապեալ»): Սա համապատասխանում է Պլուտարքոսի հանրահայտ այն հաղորդմանը, թե պարթևների Օրոդես թագավորն ու Արտավազդ II-ը միասին խրախճանքներ ու գինարբուքներ (*εστίασεις τε και ποτοι*) էին կազմակերպում (*Cras.*, XXXIII): Կամ հիմք չունենք կասկածի ենթարկելու Խորենացու նաև մյուս տեղեկությունը, թե նա որսորդություն էր սիրում:

Միջազետքին վերաբերող դրվագները, ժամանակային տեղաշարժերով ու գործող անձերի շփոթություններ հանդերձ, պատմական փաստերին չեն հակասում: 1) Խորենացին ասում է, որ Անտոնինոսը Միջազետքը գրավել էր Արտավազդից («զՄիջազետս Անտոնինոսի հանեալ էր ի նմանէ»): Իրապես, 66 թ. հռոմեացիների արևելյան արշավանքի հետևանքով Հայաստանը կորցրել էր նվաճված Հյուսիսային Միջազետքի հիմնական մասը⁹⁴: 2) Ըստ պատմիչի՝ Արտավազդ II-ը Միջազետքը վերանվաճելու համար հրամայում է զորք հավաքել Ատրպատականի բնակիչներից, աղվաններից ու վրացիներից («...Հրաման տայր զօր յարուցանել զբերաւորս Ատրպատական նահանգին և բնակիչս լերինն Կաւկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք»): Անտոնինոսի դեպի Պարթևստան արշավանքից առաջ (36 թ. գարնանը) հռոմեացիներն իրոք ճակատամարտեր են ունեցել աղվանների և իբերների հետ⁹⁵: Ապա Անտոնինոսը շարժվել է դեպի Ատրպատական և պաշարել Փրասպա մայրաքաղաքը⁹⁶: Այսինքն՝ Ատրպատականի բնակիչների, աղվանների ու վրացիների՝ Խորենացու հիշատակած ընդհարումը հռոմեական լեգեոնների հետ հիմքում ունի պատմական եղելություն: Թվում է՝ Հենց «լեառն Կաւկասու» աշխարհագրական անվանումը դալիս է հունական աղբյուրից⁹⁷: 3) 64 թ., հռոմեացիների ու պարթևների հետ հա-

93 Տե՛ս S t r a b o. XI, 13, 4; 14, 15; P l u t., Ant., L; D i o, XLIX, 31, 2.

94 Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 235:

95 Տե՛ս D i o, XLIX, 24, 1.

96 Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 258, ՀԺՊ, I, էջ 618-619:

97 Հմմտ. Հերոդոտոսի (III, 97 Καυκάσιον ὄρος) և Ապսինոսի (*Mithr.*, 103 Καύκασον ὄρος) մոտ:

մաճայնությամբ, հյուսիսային Միջագետքի մի մասը դարձյալ մտավ Հայաստանի կազմի մեջ⁹⁸: Արտավազդի օրոք այն շարունակում էր մնալ նրա իշխանության տակ⁹⁹: Խորենացու մոտ այս վիաստն արտահայտված է հետևյալ կերպ. «[Արտավազդ] խաղայ իջան է ի Միջագետս, և հալածականս առն է զգորս Հռոմայեցւոց»:

23-րդ գլխի բովանդակությունն ընդհանուր առմամբ համասլատասխանում է Հովսեպոսի տեղեկություններին, բայց առանձնանում է գլխի սկիզբը. «Մ'ռնչեալ առիւծաբար գազանութեամբ Անտոնիոս, առաւել ևս թունեալ ի Կղէոպատրայ, քանզի քէն պահէր վասն լիկանաց իւրոյ հանոյն, որ ի Տիգրանայ»: Հովսեպոսը չի պատմում Արտավազդ II-ի դեմ Անտոնիոսի գայրույթի մասին, այլ սոսկ ասում է, որ նա արշավեց ընդգեմ պարթևների, ապա, Պարթևստանից վերագառնալով, Կլեոպատրային նվիրեց իր գերի «պարթևին» (Արտավազդ II-ին) (B. J., I, 362-363): Մինչգետ այլ աղբյուրներից հայտնի է, որ Ատրպատականում իր կրած անհաջողությունների համար Անտոնիոսը գլխավոր մեղավոր էր համարում Հայաստանի թագավորին, որին ի վերջո նենգարար ու դաժանորեն պատժեց¹⁰⁰:

Հետաքրքիր է և կարող է իրական հիմք ունենալ Տիգրանի և նրա սերնդի գեմ Կլեոպատրայի քինախնդրության մասին Խորենացու տեղեկությունը, քանի որ, ինչպես նշել ենք, հնարավոր է, որ Եգիպտոսի այս թագուհին Տիգրանի հրամանով մահապատժի ենթարկված Կլեոպատրա-Սելենի թոռն էր:

Արտավազդ II-ի գերման մասին Հովսեպոսից վերցված տեղեկությամբ ավարտվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» խնդրո առարկա հատվածը: Այժմ, հիմք ընդունելով ողջ ասվածը, փորձենք մեր շարագրանքն ամփոփել հետևյալ եզրակացություններով.

1) Արտաշես I-ի մասին հատվածներում կան տեղեկություններ, որոնք պատմական իրականության արձագանք են, հատուկ անուններ, որոնք ծագում են հունական աղբյուրից (Խորենացուն հասած բնագրով կամ հայերեն թարգմանությամբ, անմիջականորեն կամ մեկ ուրիշ գրվածքի միջոցով), հունալեզու չորս հեղինակներից մեջբերումներ. այս ամենը կարող են վերցված լինել Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրությունից» (որի պահպանված հատվածներում հիշատակվում է նշված չորս հեղինակներից մեկը՝ Ֆլեգոնը):

2) Խորենացին ունի Տիգրան II-ին և Արտավազդ II-ին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերող ստույգ տվյալներ, որոնց աղբյուրը Հովսեպոս Փլավիոսի «Հրեական պատերազմի մասին» երկը չէ: Դրանք, ինչպես որ Արտաշես I-ի պատմության որոշ գրվածքներ, ամենայն հավանականությամբ, Խորենացուն ծանոթ են եղել անտիկ միջավայրում ստեղծված մեկ ուրիշ գրվածքից: Չենք կարող պնդել, թե այդ գրվածքը բոլոր նշված գեպքերում Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրություն»

98 Հ. Մ ա ն ա դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 235, ՀԺՊ, I, էջ 600:

99 Հ. Մ ա ն ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 252:

100 Տե՛ս ՀԺՊ, I, էջ 618-625:

է. բայց որ այն, գոնե երբեմն, իրոք Խորենացու աղբյուրն է եղել, երևում է «Հայոց պատմութեան» II գրքի 19-20-րդ գլուխներում առկա՝ Աֆրիկանոսի երկրից պահպանված հատվածների հետ բառացի զուգահեռներից:

3) Ինչպես նշել ենք, հետագա հեղինակները, որոնք որպես աղբյուրներ օգտագործել են Հովսեպոսի և Աֆրիկանոսի երկերը, որոշ իրադարձությունների մասին պատմելիս, նրանց անունները հիշատակում են կողք-կողքի: Ուստի առանձին դեպքերում, երբ Խորենացին շեղվում է Հովսեպոսի տեղեկություններից (այդպիսի շեղումներ փորձեցինք ցույց տալ), նրան, ըստ երևույթին, հիմք են ծառայել Աֆրիկանոսի տվյալները:

4) Այս ամենը հաշվի առնելով՝ պետք է ընդունել, որ Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրությունը», թեպետ բուն Հայաստանի և Հայերի մասին Խորենացուն շատ նյութ չի մատակարարել, այնուամենայնիվ եղել է նրա աղբյուրներից մեկը (դարձյալ կրկնենք՝ հունարեն բնագրով կամ հայերեն թարգմանությամբ, ուղղակիորեն կամ մի երրորդ հեղինակի կատարած մեջբերումների միջոցով), և ճիշտ է այն կարծիքը, թե պատմիչն Աֆրիկանոսի անվանը ծանոթ էր միայն Եվսեբիոսի միջոցով:

5) Հոգավածի սկզբում նշեցինք, որ խնդրո առարկա հարցերին պատասխան գտնելը կարևոր է աղբյուրագիտական, Խորենացու որոշ տեղեկությունների հավաստիությունը պարզելու և աղբյուրների օգտագործման նրա մեթոդների ուսումնասիրության տեսանկյուններից: Այս առթիվ անհրաժեշտ է ասել հետևյալը. ա) Եթե ի նկատի առնենք, որ Աֆրիկանոսի «Ժամանակագրությունը» եղել է Խորենացու աղբյուրը, կարող են նորովի դիտվել նրա «Պատմության» առնչություններն ուրիշ դրվածքների հետ (մասնավորապես մեր դիտարկած հատվածներում՝ Հովսեպոսի «Հրեական պատերազմի մասին» երկի): բ) Խորենացու տվյալներով, որոնց հիմքում, փաստորեն, ստույգ աղբյուր է, հաստատվում են ուրիշ երկերում առկա որոշ տեղեկություններ (օրինակ՝ որ Արտաշես I-ն իր պատկերով դրամ է կտրել տվել, որ նա սկզբում իր երկրի սահմաններն ընդարձակել է դեպի արևելք, ապա՝ Հյուսիս, որից հետո արշավել է դեպի արևմուտք, որ 40 թ., պարթևների հետ, թագաժառանգ Պակորոսի (Բակուրի) գլխավորությամբ, Ասորիք են ներխուժել նաև Հայերը (այդ մասին ակնարկում է Փավստոս Բուզանդը. IV, 55) և այլն): Հետաքրքիր են Հայ Արտաշեսյան թագավորների և Պտղոմյանների հարաբերություններին վերաբերող՝ Խորենացու ակնարկները: գ) Հուլիոս Աֆրիկանոսի «Ժամանակագրության» հետ Խորենացու առնչության դեպքում ևս նկատելի է աղբյուրների օգտագործման նրան բնորոշ մեթոդներից մեկը: Երբ Խորենացին նշում է իր հետագա շարադրանքի որևէ աղբյուր, դա չի նշանակում, թե նա այնուհետև պարզապես արտագրելու է այդ աղբյուրից: Նման դեպքերում պատմիչը հաճախ տվյալ տեքստից միայն հատ ու կենտ դրվագներ է օգտագործում. դրանք դիտարկելով իրեն ուրիշ աղբյուրներից հասած տեղեկությունների համեմատությամբ՝ նա համապատասխան եզրահանգումներ է անում ու պատմությունը կառուցում իր տրամաբանությամբ: Հենց այդպես է Խորենացին օգտվել Աֆրիկանոսի տեղեկություններից՝ քաղելով իրեն անհրաժեշտ առանձին տվյալներ ու դրանք յուրովի միահյուսելով իր շարադրանքին:

"ХРОНИКА" ЮЛИЯ АФРИКАНА И МОВСЕС ХОРЕНАЦИ

ԱՐԱՄ ԹՕՓՇՅԱՆ

Ր Ե Յ Յ Մ Ե

Одной из частей "Истории Армении" Мовсеса Хоренаци, подвергшихся наибольшей критике, является глава II.10, в которой он упоминает "пятую книгу хронографа Африкана" как основной источник дальнейшего повествования. Неясно, в какой степени Хоренаци пользовался этим источником, а именно, в какой части он начал черпать информацию из него и до каких пор, какие конкретно данные он позаимствовал у хронографа. Некоторые ученые полагают, что Хоренаци не имел под рукой никакого сочинения Африкана, а знал о "Хронике" лишь благодаря Евсевию Кесарийскому. На протяжении тринадцати глав, следующих за упоминанием Африкана, Хоренаци рассказывает об Арташесе I, Тигране II и Артавазде II. История Арташеса основана на нескольких источниках. Что касается Тиграна II и Артавазда II, единственным греко-римским источником повествования Мовсеса считается Иосиф Флавий. Детальный анализ указанных глав, а также сохранившихся отрывков Африкана и других сопутствующих материалов приводит к следующим выводам:

1) В главах, относящихся к Арташесу I, некоторые исторические сведения, личные имена и цитаты из греческих авторов могли восходить к "Хронике" Африкана.

2) Хоренаци сообщает точные сведения, относящиеся (прямо или косвенно) к Тиграну II и Артавазду II. Источник этих сведений не Иосиф Флавий. По всей вероятности, они почерпнуты у другого греко-римского автора. Мы не можем утверждать, что во всех случаях это Африкан, однако в главах II.19-20 встречаются дословные параллели с некоторыми сохранившимися фразами хронографа, подтверждая предположение, что его "Хроника" была в числе источников Мовсеса.

3) На основании сказанного следует признать, что хотя Хоренаци и не мог найти в "Хронике" много сведений, касающихся Армении, она послужила ему источником, и что точка зрения, согласно которой он был знаком с Африканом только через посредство Евсевия Кесарийского, неоправдана.

JULIUS AFRICANUS' CHRONICLE AND MOVSES KHORENATS'I

ԱՐԱՄ ԹՕՓՇՅԱՆ

S u m m a r y

One of the most criticized passages of Movses Khorenatsi's *History* is chapter II 10 where he mentions "the fifth book of Africanus the Chronographer" as the main source for his further narrative. The use of this source by Movses is indefinite; it is not clear in what part he begins to draw information from it and until when, and particularly what data has he taken from the chronographer. Some scholars thought that Movses had not any writing of Africanus at hand,

and that he knew about the *Chronicle* only through Eusebius of Caesarea. In the 13 chapters following the mention of Africanus, Movses narrates about Artashes I, Tigran II and Artavazd II. The history of Artashes I is based on several sources. As to Tigran II and Artavazd II, the only Greco-Roman source for Movses' narration is considered to be Josephus Flavius. A detailed study of the chapters in question, as well as the extant passages by Africanus and other related material brings to the following conclusions:

1) In the chapters concerning Artashes I, there are certain passages reflecting historical reality, several proper names and citations from Greek authors that may have been taken from Africanus' *Chronicle*.

2) Khorenats'i suggests exact data related (directly or indirectly) to Tigran II and Artavazd II. The source of those data is not Josephus: in all probability they are drawn from another Greco-Roman author. We cannot insist that it is always Africanus, but in chapters II 19-20 there are literal parallels with some extant phrases of the chronographer, corroborating that the *Chronicle* has been among Movses' sources.

3) Taking this into consideration, we should accept that, although Africanus' writing has not provided Khorenats'i with much information concerning Armenia, it has been a source for him; and the opinion that he knew the chronographer's name only thanks to Eusebius of Caesarea is not correct.